




Հին է դիմակս, և լեզուս է հին,  
Փնտրում եմ ռիթմեր, հանգ ու աստմանս,  
Ու հորինում եմ հոգուս մեղեդին  
Մերձ ի դաշնություն, դեպի մի սահման,  
Ուր պարզ է ձևը, իմաստը խորին  
Եվ էությունը ներփակ ու անձայն:



ՂԱՍԵԹՎԱԾՂՈՒԹՅՈՒՆ  
ԱՆԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԿԿՂԳՅ

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԱՆԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ



ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՆԴԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծություններ  
և թարգմանություններ

ԵՐԵՎԱՆ

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2014

ՀՏԴ 891.981-8 Հովհաննիսյան

ԳՄԴ 84 Հ

Հ 854

Հովհաննիսյան Հենրիկ  
Հ 854 Անդարձություն. բանաստեղծություններ  
և թարգմանություններ/ Հ. Հովհաննիս-  
յան.- Երևան: «Գիտություն» հրատ.,  
2014, 192 էջ:

Բանաստեղծությունների ու թարգմանությունների  
այս գրքույկը ներառում է արվեստագետի իրական ու  
գրքային հայեցումները՝ լիրիկական շեղումներ, հեզ-  
նանք և խոհ:

ՀՏԴ 891.981-8 Հովհաննիսյան

ԳՄԴ 84 Հ

ISBN 978-5-8080-1077-2


© Հովհաննիսյան Հ., 2014



ԼԻՐԻԿԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ


\* \* \*

Հին է դիմակս, և լեզուս է հին,  
Փնտրում եմ ռիթմեր, հանգ ու աստնանս  
Ու հորինում եմ հոգուս մեղեդին  
Մերձ ի դաշնություն, դեպի մի սահման,  
Ուր պարզ է ձևը, իմաստը խորին,  
Եվ էությունը ներփակ ու անձայն:




\* \* \*

Իմ հյուլեն այնտեղ էր,  
Ուր հողը մոտ էր երկնքին,  
Եվ լույսը բարի էր,  
Աստված տնկում էր իր այգին:  
Այնտեղ՝ պարտեզում Եդեմի,  
Լույսի մեջ դեռ թաց,  
Բացվում էր վաղորդայն օր մի,  
Եվ ժպտում էր Աստված:




\* \* \*

Ես աշխարհ եկա դրախտում,  
Իմ գլխին կապույտ մի երկինք,  
Արևի ծնծղան էր զնգում,  
Լույսի մեջ ոսկի մի ծաղիկ:  
Եվ օրը շեփոր էր լույսի,  
Ցնծում էր, ես լույսի օրոցքում,  
Ժպտում էր ծաղիկն արևի,  
Ականջիս բզզում էր մեղուն:



\* \* \*

Եղե՞լ էր արոյոք, թե լինելու էր  
Այն, ինչի համար եկել էիր աշխարհ.  
Լարված աղեղից արծակված մի նե՞տ,  
Թե մի երկնաքար ընկնելու էր վայր,  
Թե՞ թև մի ցնցում, մի կայծ, ինչի հետ  
Դու աչք էիր բացել և ի՞նչ իմանայիր,  
Թե ինչի համար եկել էիր աշխարհ:






## EXISTENTIA

Գերագույն զտվածքն ես հողի,  
Հինգերորդ տարրը բնության,  
Հավերժությունն է քո ուղին,  
Սրտումդ դողը մահվան:


Ահաբեկ ես դու, և իզուր եմ  
Կեղեքում քեզ հոգս ու թախիծ,  
Ազատ է թողել քեզ Տերը,  
Ասել է՝ ծանիր քեզ և ինձ:

Դու բացահայտ ես ու ներհակ,  
Եվ ի՞նչն է քեզնում, քեզ տրված,  
Անհունը՝ այն տեղը միակ,  
Ուր ոգու կանչն է և Աստված:



\* \* \*


Մենք երբեք մենակ չենք լինում  
Մեզ հետ չենք ինքներս երբեք,  
Մեր հոգին մարմնի բանտում է,  
Ու մեկը հավիտյան մեզ հետ:  
Ո՞վ է նա, աստված, թե սատանա.  
Ամեն օր դավ է նյութում,  
Մեզնից դո՞ւրս, թե մեր մեջ է նա,  
Մեր սրտի մի մութ անկյունում:





## ԿԱՐՏԵԶՅԱՆ ՓԱԿՈՒՂՈՒՄ


Առկա է Եսր, դու պատկանում ես  
Նրան, մտքից դո՞ւրս, թե ինքն է միտքը,  
Ընդունենք՝ միտքը, նրան կրում ես,  
Մտածում ես, կաս, իսկ ո՞վ ես ինքդ  
Քո կապանքներում, ճանաչո՞ւմ ես քեզ:



## ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ


Կեսգիշերն անցնում է, լռում են ծայները,  
Չոզնում են խոսքերը մթնում,  
Մարում են մայթերին վերջին քայլերը,  
Մոռացվում զգվանքներ ու խոստում,  
Չեն հոգնում, չեն լռում ցավերը օրվա,  
Ցավերն են գիշերը արթուն:






## ԻՆՔԴ ՔԵՉ

Թեթև է բեռդ ու ծանր է այնքա՛ն,  
Հոգնել ես ինչի՞ց, սիրտդ կեղեքող  
Ցավերի՞ց ունայն, թե աննպատակ,  
Անխորհուրդ, անմիտ, չնչին հոգսերից,  
Խոսք ու զրույցից հոգիդ կողոպտող  
Ու այն հոգևոր ողորմությունից,  
Որ սպասում են ու աղերսում են  
Ծանոթ, անծանոթ ամեն պահ քեզնից:  
Բայց տրված է քեզ Աստուծո պարզև  
Մենակությունդ... Ա՛յ, հենց դրանից  
Ջրկել ես դու քեզ, դարձել ես օտար  
Ու վտարանդի ինքդ քո անձից:



## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16, 2011 Թ.


Այս ամբոխի մեջ, ժխտում խառնակ  
Ո՞վ ես դու և ինչ, մասն ամբողջությա՞ն.  
Ի՞նչ է ամբողջը, ինչ-որ պտուտակ  
Այնտեղ, կենտրոնում շարժում է մի բա՞ն,  
Եվ կա՞ նպատակ, մի խորհուրդ, մի կամք,  
Թե՞ օտարված ենք, ամենքս մենակ,  
Ու ճանապարհներն իրար հակառակ,  
Ամայության մեջ ու մոլորության  
Եսը ինքն իր հետ և ճշմարտության:





\* \* \*


Հեռու, պահիր քեզ այս ունայնամիտ,  
Անխորհուրդ, անհոգ ու բիրտ ամբոխից,  
Մոռացիր և՛ քեն, և՛ ցավ, և՛ թախիծ,  
Ու խոր թաքցրու սիրտդ միամիտ:  
Փակիր անձիդ դեմ դռները բոլոր,  
Պարսպապատիր մենությունը քո,  
Խիղճդ վիրավոր ու ներսից լսիր  
Ջարկերը սրտիդ՝ ձայնը Աստուծո՛ւ:



\* \* \*

Մի տանջիր միտքդ, մի վճռիր ոչինչ՝,  
Լռիր, երբ հիմարն է դատում,  
Օրվա վերքերին՝ գիշերն ամոքիչ,  
Լավ օրը մյուս օրն է լինում:

Ապրում ես, ինչ քեզ տրված է, կրիր՝  
Խնդություն, թախիծ, հոգու ցավ,  
Ի՞նչ գտար այսօր, կամ ինչ կորցրիր,  
Մի դժվար օր էլ, փառք Աստծո, անցավ:





## ԱՆԳԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Քեզ ինչպե՞ս կանչեմ, ես այն չեմ, այն չեմ:

Վ. Տերյան

*Վաղուց է՝ քեզ չեմ սպասում,  
Ինձ համար հուշ ես մի հին,  
Վաղուց է՝ չկաս իմ երազում,  
Երազներս անգույն են հիմի:*

*Դատարկ է սիրտս, տեղդ բաց,  
Կարոտում եմ իմ կարոտին,  
Անսեր, անաղոթք, անաստված,  
Լռել է հոգուս մեղեդին:*

*Թե լինի մի օր, շրջվեմ հետ  
Ու նայեմ դարձյալ քո ճամփին,  
Կգտնե՞մ արդյոք այնտեղ քեզ,  
Կսպասե՞ս արդյոք իմ դարձին:*




## ԱՆԾԱՆՈԹՈՒՀՈՒ ԴԻՄԱՆԿԱՐԻՆ

...խնդրեցի զնա եւ ոչ գտի:

Երգ երգոց, Գ.1


*Ես քեզ չեմ փնտրել իմ երազներում,  
Չեմ սպասել քեզ, ինձ չի այցելել  
Պատկերդ երբեք, ու չեմ իմացել,  
Որ ինձ հետ ես դու ուրիշ մի տեղում,  
Կրքերից հեռու, ցավերից հեռու  
Անորոնելի ու անմատչելի,  
Պատմեշված հավերժ քո շրջանակում:*





## ԹԱՏՐՈՆ

Այնժամ, երբ փակ է վարագույրը,  
Ու սրահն սպասում է լուռ,  
Լռություներ էության խորհուրդն է  
Մեզնից դուրս, մեզնից վեր ու մաքուր:



## ԴԵՐԱՍԱՆԻՆ


Я был не один, а с кем-то,  
кого искал в себе.

К. Станиславский

Փախչում ես ինքդ քո անձից,  
Ուրիշին ես փնտրում քո սրտում,  
Ինչ-որ մեկի հետ ես միշտ,  
Ինչ-որ մեկին ես հորինում:

Դու սիրում ես քեզ արվեստում,  
Փնտրում ես ճանաչում ու սեր,  
Անհատույց վայելք ես փնտրում  
Ու սրտի անվնաս ցավեր:



Զգիտես՝ ում ես աղոթում,  
Ինչեր ես կորցնում ճամփիդ,  
Ով է փոս փորում քո սրտում,  
Եվ ինչու ցավում է հոգիդ:





## ՊԼԱՏՈՆԱԿԱՆ ՍԵՐ


...մոռացված մի վե՞պ, վաղո՞ւց է եղել,  
Թե հորինվել է ամայի մի տեղ,  
Մենության խցում, դեռ այն օրերին,  
Երբ բաց էր երկնի ճամփան լուսեղեն,  
Ու թևածում էր հույսի աղավնին:



## ОДНА


Твоя тень млеет в романах  
Иль в драмах Антона Чехонте,  
А дальше где уж тебе место?  
Ты жива лишь в грёзах невинных.

Ты манишь как мнимая близость,  
В тайной сладости осенней,  
Ты мне ни надежда ни спасение,  
А лишь утешение и радость.



\* \* \*

Երբ արդեն հասել ես մի ափ,  
Ուր չունես այլևս սպասում,  
Անցել են երազանք ու տազնապ,  
Անցյալը ներկա է թվում:  
Անցյալը սնում է ներկան,  
Ու ներկան անցյալն է սնում,  
Եվ ի՞նչն է արդյոք իրական,  
Երբ չունես այլևս սպասում:



## МАРАФОН


Ахилл не догонит черепаху,  
Фидипид себя не догнал,  
За временем не гонись, не к спеху,  
К чему уж славы пьедестал?

Вытерпи эту долгую дорогу,  
Таится в ней трудная радость,  
Награды не будет, слава богу,  
Сам выбрал свою долю, свою участь.

Не думай ни о чем, все забудь,  
Забудь свою личность на время,  
Вытерпишь, выдержишь как-нибудь  
Дорогу, как жизни бремя.

Не думай о конце, его нет,  
Крутится под ногами земля,  
Черепашу никто не догонит,  
А кто же догонит себя?







## ԴՈՆ ԺՈՒԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԳԸ

*Ազահ էր սիրտս, ամեն կին  
Ուներ իր տեղը իմ սրտում.  
Ես սիրում էի ամենքի՞ն,  
Թե ամենքն էին ինձ սիրում:*

*Թեթև էր, թե ծանր իմ մեղքը,  
Սրտումս դրախտն էր ծաղկում,  
Ու վերջին, շքեղ իմ ընթրիքը  
Այնտեղ էր, ավա՛ղ, դժոխքում:*




## ԱՍՊԵՏԱԿԱՆ ՍԵՐ

Ու մնաց սուրբ, մնաց անկեղծ  
Սանոն Լեսկոն:

**Ե. Չարենց**


*Դու սիրում ու ներում ես նրան,  
Կրում ես քո սերը հանճարեղ,  
Ո՞վ է սիրուհիդ, մի կին էժան,  
Տրված ամեն մեկին պիղծ ու կեղծ,  
Որ տիրել է հոգուդ դևի նման  
Եվ սուրբ է նա, անեղծ ու վեհագույն,  
Քանզի սուրբ ես դու, և անեղծ է  
Առասպելը կնոջ քո կույս հոգում:*



**ԲԵՌՆԱՐՏ ՏՐՈՒԲԱԳՈՒՐԻՆ\***

*Քո սիրո առարկան փակի տակ է միշտ,  
Դոյակի վերին աշտարակում.  
Սրտիդ խորհուրդն է այդ ու ճիշտ է  
Յոթ փականքի տակ ու քո երգում:*

*Հորինել ես նրան՝ անդրադարձը հոգուդ.  
Իրական է միայն տողը երգիդ,  
Հորինված է կյանքդ՝ չեղած բանի կարոտ,  
Ու պրկված է լարը քնարիդ:*



\* Բեռնարտ դե Վենտադորն. 12-րդ դ. պրովանսյան բանաստեղծ:

**Ռ. Հ.**

*Երգիդ մեջ կարոտներ կան անհուն,  
Հեռացած սերեր ու թախիծ,  
Մանկությունդ՝ ոսկե մի թռչուն  
Ձգում է թելը քո սրտից:*


*Հիշում ես, երագում ու հեզնում,  
Հայիոյում, չգիտես, թե ում.  
Վտարված ես դու դրախտից,  
Աղամի թախիծն է քո հոգում:*





## ԿԱԹԱՐՄԻՍ


Տեսել ես ավելին, քան տեսել ես,  
Կռահել խորհուրդը գեղեցկի,  
Ու սիրո մորմոքը մարմրում է,  
Մեխվել ես հայացքով  
Քո կերտած տեսիլքի լռությանը,  
Ու հանգչում ես բոցակեզ հոգով:




## ՋՐԱՇՈՒՇԱՆ

Նուրուֆար Մինասյանին

Միջօրյա արևն անձրևից հետո  
Սկռվել է կարմրավուն տանիքներին,  
Ու մի ձեռք ապակու այն կողմից  
Գծագրել է մոտիկն ու հեռուն,  
Լույսը բաժանել հավասար,  
Մոտեցրել ու հեռացրել ծավալներն  
Ինչպես վաղորդյան երազի ցուլքեր՝  
Պարզաջրված շղարշե դիպակին,  
Ուր գծագրված են ձևերն  
Ասեղնահյուս, գունավոր թելերի նման,  
Մաքուր տարածության մեջ,  
Լուսավորված ծիածանի գույներով,  
Իսկ դրսում ամպրոպը լռել է,  
Անձրևը լվացել տանիք ու պատուհան,  
Դուռ ու սանդուղք,  
Լուռ են թանաքե կապույտը,  
Յասամանն ու ծիրանին,  
Եվ դու լուսամուտին հենված,  
Ճակատդ պաղ ապակուն,  
Ազատագրված կրքերից ու թախծից:










## ՀԵԼԼԵՆԱԿԱՆ

Ով հանճարներ մտքի, գեղեցկության,  
Ձեզ հայտնի էր հյուլեն՝  
Երկրայինը միայն,  
Դուք հղկում էիք նյութը,  
Կերտում հնքների ձեզ  
Ի դեմս աստվածների ձեր մարմարյա,  
Ու չգիտեիք, չէի՞ք կարող,  
Թե չէիք ուզում իմանալ,  
Որ կա աշխարհ մի այլ  
Ձեր մտքից վեր,  
Եվ դուք այնտեղ եք:



## ՏԱՃԱՐԸ



Գրկում է հողը ու նայում է վեր,  
Խարիսխ ու խոյակ և առագաստներ  
Պահում են երկինք ու հայտնագործում  
Տարածությունը տիեզերական՝  
Խորանարդն ի գունդ, երկիքն ի երկիր,  
Խաչվող կամարներ, ու մի լուսանցույց  
Անկյունագծով ճեղքում է մութը...  
Տեսչությունն Աստծո իջել է երկիր:





## ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Այս ճանապարհին սև կատուներ են  
Անցնում մեր միջով, ու չենք նկատում՝  
Ինչպես է փլվում ամբողջ ոգու,  
Ինչպես են բացվում անանցանելի  
Վիհերը մեր մեջ, և համուն ինչի՞  
Մենք հայտնվում ենք տարբեր ափերում,  
Իսկ երբ զղջում ենք ու ձեռք ենք մեկնում,  
Մոռանում և վեճ, և պատճառ և քեն,  
Ներում ենք իրար ու չենք մոռանում  
Իրար հասցրած վերքերը երբեք:




## ԱՂՈԹՔԻ ՓՈԽԱՐԵՆ

Որտե՞ղ է մոռացումի գետը,  
Որտե՞ղ է լեռը քավության,  
Չգործած մեղքերս ինձ հետ են,  
Ու սրտիս ցավերը անձայն:

Չեռո՞ւ է, թե մոտ է օրը,  
Ամենքինս է այս ճամփան.  
Ինձ թող, Տեր, իմ հոգու բեռը,  
Չոգսերս ծղծիմ և ունայն:

Դու ես քո կամբը, դատիր ինձ.  
Մեղքերս ծանր չեն այնքան,  
Տեսնում ես՝ մերկ է հոգիս,  
Թող անցնեն գետը մոռացման:



\* \* \*

Ամենագորն ու անխուսափելին  
Նայում է ամենքիս դռանը,  
Նրա շշուկը հեռվից է գալիս,  
Հեռու է ու մոտ ոտնաձայնը:


Տեսնում է նա մեզ ու հսկում,  
Ստվերի նման անցնում է կողքից,  
Քսվելով անցնում է ու գնում,  
Հսկում է հեռվից ու մոտից:

Ամեն պահ նա պատրաստ է գալու,  
Եվ կա մեր հաշվում հեռակա,  
Ոգի՞ն, թե պատյանն է տանելու՝  
Մահացու կապա՞նքը... թող գա:




## ԱՐԹՆԱՅՈՒՄ

Հեռախոսը զնգաց,  
Մի ծայն հնչեց՝ ողջույն,  
Ինչպես ամպրոպի լույս,  
Մայիսյան տաք անձրև  
-Լսո՞ւմ ես, լսեցի՞ր...  
Ու վանդակում փակված  
Թնդաց մի տիեզերք:



ՉԱՅԿՈՎՍԿՈՒ «ՄԵԼԱՆԽՈԼԻԿ  
ՍԵՐԵՆԱԴԸ»

*Ջութակի նվվոց, հոգնած մեղեդի,  
Մարմրող մի հուշ, թեթև մի հուզում  
Ու հին պատմություն, սփռվածք սրտի,  
Մոռացված աշխարհ մոռացված տեղում:*




\* \* \*

*Մենք աշխարհ եկանք լույս երազներով  
Եվ սպասեցինք ոսկե օրերի,  
Մեր սրտերը լի, երազների ծով,  
Ու երազներին մնացինք զերի:*

*Չուզեցինք տեսնել տրտմություն ու ցավ  
Մեր տրտմության մեջ ու մեր ցավերի,  
Խնդություն ու սեր մեր կողքով անցան,  
Եվ սպասեցինք ոսկե օրերի:*


*Տարիների հետ եկան ու անցան  
Դառնություն ու հոգս, երազանք ու սեր,  
Տարիներն անցան օրերի նման,  
Տեսանք՝ անցել են մեր ոսկե օրեր:*






## ԳՈՒԼՍԻՆԵԱ

Յեռու լինես, թե մոտ,  
Մնում ես առասպել՝  
Ոչ սիրուհի, ոչ կին,  
Այլ երազանք ու խիղճ  
Եվ անհամբույր մի սիրտ,  
Քո դոյակում փակված,  
Յեռվից հսկում ես ինձ:




## ԷԼԵԳԻԱ

Թռչում են կռունկներն իմ աշնան.  
Ամառը ինչքա՞ն շուտ անցավ.  
Անցյալ է դառնում իմ ներկան,  
Օրերը ի՞նչ կարճ են հիմա:  
Օրերը թռչում են անթև,  
Անձև, անմարմին ու անցավ,  
Չգրված թերթեր են օրերը,  
Ամառն իմ, այդ ե՞րբ էր, անցավ:



\* \* \*

Աշնան ծաղկի նման հայտնվում է նա մեզ,  
Մայրամուտի վերջին շողքում, ճամփամիջին,  
Ու թվում է շատ մոտ, բայց հեռու է այնպես,  
Աշնան երա՞զն է այդ, թե մեր սերը վերջին:



\* \* \*

Անցյալը պարտեզն է մեր հոգու,  
Ճենում ենք այնտեղ անարգել,  
Այնտեղից ծաղիկներ ենք քաղում,  
Պսակներ հյուսում լուսեղեն:  
Այնտեղ է դրախտը կորուսյալ,  
Ուր ցավերն անվնաս են արդեն,  
Կա՞ արդյոք մոլորակ մեկ այլ,  
Ուր հոգու ցավերն են վարդեր:



\* \* \*

Մոմի լույսը չնչին  
Դողում է իմ շնչից.  
Նա իմ հոգնած արյան  
Մասն ունի իր միջին  
Ու փոթորկում է նա  
Իր հնոցում փոքրիկ  
Մինչև վերջին մի պահ,  
Վերջին չնչին մի ճիգ:

\* \* \*

Կրում ես քո ներկան, և դա այլ է.  
Ի՞նչ էր լինելու, չի եղել,  
Թիկունքում մշուշված է անցյալը՝  
Ամեն օր հորինվող առասպել:  
Այսպես հորինում ես ինքդ քեզ,  
Սրբում ես կտավիդ փոշին,  
Երեկվա նվազներն են քեզ հետ,  
Նորոգվող տեսիլքները հին:

\* \* \*


Ո՞վ էր, ձայն տվեց ինձ,  
Ո՞վ է կանչում ինձ տուն,  
Ո՞վ է նայում ճամփիս...  
Հետ մի նայիր, գուր է,  
Ուշ է, օրն է մթնում:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԱԿՈՒՂԻՆԵՐՈՒՄ




\* \* \*

*Քավարանի լեռն է մեր երկիրը,  
Ուր քավում ենք մեղքը նախնական,  
Սպասում, թե կանչելու է Տերը՝  
Մեր անմեղ մեղքին ի պատասխան:*



## ՆԱԻՐԻ


*Առասպել ես դու և առեղծված,  
Գալիս ես անասելի հեռվից,  
Վկաներդ քարերն են տաշված,  
Գրերդ, լեզուն քո անբիծ.  
Այսքանը և հույս առ Աստված,  
Աղոթքդ ի խորոց սրտից,  
Եվ ի՞նչ է սրտունդ թաղված,  
Ի՞նչ է այդ, որ վեր է քեզնից:*





## ՇԻԴԱՐ

Շղթայված է նա Մասյաց վիհերում՝  
Մեր սպասումը, թե հույս, թե տազնապ,  
Ու ժամանակը շղթան է լիզում  
Գիշեր ու ցերեկ. սև ու սպիտակ  
Երկու կույր շներ կրծում են երկաթ  
Ու խուլ վնգստում խավարի միջում,  
Անսկիզբ, անվերջ, այսպես անդադար.  
Գիշեր, թե ցերեկ, մեր հույսն ի խավար:




## ՎԱՄՆ ՀԱՎԱՏՈ

Я не тому молюсь...

С. Надсон

Շքեղ տաճարներ, քանդակազարդված,  
Ոսկեզօծ խաչեր երկինք են նայում,  
Առագաստներն են հողմերին պարզված,  
Ու պղնձակուռ զանգերն են ծայնում  
Աղոթավորին ու փարիսեցուն,  
Հանդիսատեսին զուգված, կուշտ ու կուռ,  
Խաչագողերին... Որտե՞ղ է Աստված,  
Օ՛, այստեղ չէ նա, փնտրում եք իզուր,  
Փնտրեք դուք նրան այստեղից հեռու,  
Մամռոտ ստվերում ավեր վանքերի,  
Այրերում անդուռ՝ ծգնարաններում,  
Ու լռության մեջ հին մատուռների:



\* \* \*

Եկել էր Որդին փրկելու մարդկանց  
Եվ անարգվեցավ, մատնեցավ ի խաչ.  
-Զմահ իմ պատմիցեք, ես կգամ,-ասաց,-  
Դատաստան կանեմ, կգան իմ դիմաց  
Սեղավոր, արդար, թե սաղ, թե մեռած...  
Հայր ուներ այնտեղ՝ վերևում նստած,  
Կանչեց իր որդուն, ասաց՝ ես մարդկանց  
Պատժել եմ արդեն, քչել եմ նրանց  
Իմ պարտեզներից. «Կերիցեք զհաց ձեր  
Քրտամբք երեսաց», ասել եմ նրանց:  
Եկ, նստիր կողքիս, ժամը չէ հասած  
Սե՛ծ դատաստանի:

\* \* \*

Դեռ սպասում ենք նրան, որ եկավ  
Ու գնաց անդարձ, ասացին՝ կգա  
Հազար տարի անց, այդպես էլ չեկավ,  
Երկու հազարն էլ մեր գլխից անցավ,  
Երրորդ հազարի վերջին թե եկավ...  
Ասենք թե՛ եկավ, ի՞նչ է լինելու,  
Այն, ինչ գրված է, ինչը որ եղավ:

## ՏՂՄՈՒՏ ԳԵՏԻ ԱՓԻՆ

Ո՛վ Վարդան զորավար, ի՞նչ էր քո մտքին  
Կռվում անհավասար, Տղմուտ գետի ափին.  
Խաչը քո աջ բազկին, և սուրդ արդար  
Ու՞ր էիր պարզել, մինչև Տիգրոն հասա՞ր,  
Օ՛, ոչ, ինչո՞ւ, դա քո մտքին չկար...  
Ճակատ տվիր ի մահ, որպես վերջը վերջին՝  
Վասն անմահության, ու հետ դարձանք  
պարտված,  
Մեր դրոշը թողած Տղմուտ գետի ափին,  
Մեր պարտությանը հպարտ, և հույս առ  
Աստված,  
Որպես դրոշ պարզած մեր խղճի ցնցոտին:



## ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ

Դեպի հողմերը գալիք օրերի,  
Դեպի ապագան

Ե. Չարենց


Միշտ դեպի հեռուն, անհասանելին,  
Դեպի անհայտը, դեպի ապագան...  
Գնացինք այսպես՝ ցավերի միջով,  
Դավերի միջով, մոռացած ներկան,  
Ու տեղ չհասանք, հետ դարձանք մթնով,  
Մեզ հետ նոր ցավեր, փնտրեցինք ճամփան  
Մեր կորուստները գտնելու հույսով  
Ու նորոգելու կամուրջներն այրված,  
Փնտրելու նորից անհայտ մի ուղի՝  
Անաղարտ, մաքուր, մեզ համար պահված  
Անորոշություն գալիք օրերի  
Հողմերի դիմաց...





Ե. Չ.


Ով նահրյան հանճար,  
Փակուղում հայտնված բանաստեղծ,  
Դու եկել էիր աշխարհ  
Քայլելու դարիդ առընթեր  
Ու երկինք նետելու հրավառ  
Յոգիդ որպես արև,  
Բայց քո դիմաց պատ էր,  
Ու հսկում էր խավարը.  
Դու այլ էիր լինելու,  
Քեզ խաբել էր քո դարը:



ՈԳՈՒ ՍՈՎ

Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով...  
Ավ. Իսահակյան


Եկել է վաղուց արդեն ոգու սով,  
Քաղցում են մարդիկ ճոխ սեղանի մոտ,  
Հափրած որկորով, մռայլ ու դժգոհ.  
Ուրախ չէ ոչ ոք, ինչի՞ են կարոտ:  
Այս ցուփ խնջույքում, շռայլ, աղմկոտ,  
Ի՞նչն է, որ չկա, չգիտե ոչ ոք,  
Ինչո՞ւ են թախծում սրտերը մարդկանց,  
Ինչո՞ւ են քաղցում ճոխ սեղանի մոտ:





L.


Պատմություն տեսած, կեղեքված հողում,  
Աթոռին հասար Պապ Թագավորի,  
Ո՞րն էր խորհուրդը, ո՞վ է ում տեղում  
Պատմության առաջ պատասխան տալու  
Ո՞ւմ արածների ու չարածների,  
Մեր մոլորության ու մեր գոյության  
Պարտքը մարելու:



ԸՍՏ ՏՅՈՒՏՉԵՎԻ

Իզուր չարչարանք, գլուխ չեք հանում,  
Որքան լիբերալ, այնքան էլ վուլգար,  
Ներմուծված բարքեր ու ֆեսիշացում,  
Եվ միշտ անխորհուրդ ու անզաղափար:

Խոնարհվեք, որքան կուզեք, պարոններ,  
Արևմուտք, Հյուսիս ոչինչ են տալու,  
Չեք կարող լինել մտքի ծառաներ,  
Ոչ իսկ լակեյներ դուռը հսկելու:



\* \* \*

Ո՞ւր էինք գնում, որ տեղ չհասանք,  
ճամփաները մուք, ընթացքը մեր կույր,  
Հույսի ծրագույ, հույսը սփռվանք,  
Ու խիղճը դրոշ. այսպես մինչև ո՞ւր:



## ՔԱՌՅԱԿՆԵՐ


\* \* \*

Խորան ու մի դուռ, իմ խուցը միշտ նեղ,  
Պատից մինչև պատ երկու քայլ միայն,  
Ու աշխարհից դուրս աշխարհը այնտեղ՝  
Անսահմանություն անսահմանությամբ:



\* \* \*


Որտե՞ղ է ժամանակը, ամենու՞ր, ինչ-որ տե՞ղ  
Շարժվո՞ւն է ժամանակը, թե անշարժ է մի տեղ,  
Իմացիր՝ միատեղ են անցյալ ու ներկա,  
Քո սրտի զարկն է անհանգիստ ինչ-որ տեղ:






\* \* \*

*Ծերմակ թուղթ, անապատ է ծերմակ,  
Ամայի, անծայր ճանապարհ,  
Գնում ես մոլորված ու մենակ,  
Փնտրում ես կորած մի աշխարհ:*



\* \* \*


*Ամեն պահ կորցնում ենք պահը,  
Ու պահը մեզ չի սպասում,  
Մեր սրտում կորստի ահն է,  
Արթուն լինենք, թե երազում:*






\* \* \*

Դու գեղեցիկ ես, կանգ առ, ակնթարթ,  
Ասաց մի անգամ իմաստուն մի մարդ,  
Ու գեղեցիկը լոկ պահն էր մտքի  
Նրա, ով տեսավ ակնթարթը այդ:



\* \* \*


Ծաղկամանն ընկավ, ո՞վ էր ձեռք տվել,  
Յո չի՞ կոտրվել, ճաքել է թեթև,  
Իսկապե՞ս թեթև, զգո՞ւշ, չդիպչես,  
Ու Աստված չանի, թե ընկնի մեկ էլ:






\* \* \*

Ի՞նչ է ոչինչը, դա կանչն է ինչի,  
Պայման է ու հարց, որ փնտրես ինչը՝  
Այն, ինչ քեզնում է, ինչը չգիտես,  
Եվ խորհուրդն է այդ ամենայն ինչի:




\* \* \*

Անցյալը կտավ է մի հին,  
Ապագան անձն է ու անձայն,  
Անցյալի անշարժ կտավին  
Ներկան պատռվածք է միայն:




\* \* \*

Իրական է միայն ոչինչը,  
Ի՞նչ ենք սպասում և ինչի՞ց.  
Այդ ինչը շունչն է Արարչի,  
Եվ այդ է իմաստն իմաստից:




\* \* \*

Մի տեղից եկել, գնում ենք մի տեղ,  
Թվում է՝ մի տեղ մի բան ենք թողել  
Ու գտնելու ենք, գնում ենք այնտեղ,  
Որ ի՞նչը գտնենք, և ինչը որտե՞ղ...




\* \* \*


Անցյալը ծառան է ներկայի,  
Ու ներկան հսկում է նրան,  
Ո՞րն է խնդիրն այս ծառայի,  
Երբ դուռն է բախում ապագան:



\* \* \*


Չկա ոչ ժամանակ, ոչ էլ տեղ.  
Տեղը փնտրում ենք, ժամանակն ստեղծում,  
Չգիտենք՝ որտեղ է տեղը,  
Որտեղից ենք ժամանակն սկսում:





\* \* \*

Ես ոչինչ չուզեմ, իմը չէ ոչինչ՝  
Եվ ոչ իսկ ինքս ու միտքս անգամ.  
Չետ են առնելու ինձնից ամեն ինչ.  
Ինչպես եկել եմ, այնպես էլ կերթամ:



\* \* \*


Ժամանակն անգոյ է, ժամանակն անձև,  
Մեզնով է հորինվում ժամանակը.  
Մի տեղից եկել, գնում ենք մի տեղ,  
Այս կարծ ճանապարհն է ժամանակը:






\* \* \*

Հոսում է անվերջ, անդադար,  
Ծնվում է, մեռնում ամեն օր,  
Հույսի հետ, լույսի հետ աշխարհը  
Միշտ նույնն է, երեկ, թե այսօր:



\* \* \*

Ժամանակը գնացքի ընթացք է.  
Հաշվում ենք սյուներ ու կայան,  
Ու գիտե՞նք արդյոք, որ այս ընթացքը  
Հայեցումն է մեր կեցութան:



\* \* \*

Գիտակցվում է մի էություն վերին,  
Եղնարիտ մի կամք, վերին մի սահման,  
Մեզնո՞ւմ է արդյոք, թե մեզնից անդին  
Խորհուրդը նրա՝ անհաս մի սահման:



\* \* \*

Եղնարիտ է նա, գիտենք, որ նա կա,  
Նրա խորհուրդն է, որ հսկում է մեզ,  
Մեր տազնապներում նրա շունչը կա,  
Մեր սրտում է նա և օտար է մեզ:









\* \* \*


Ծշմարիտ է այն, ինչը որ չկա,  
Որ ոչ ծնվում է և ոչ էլ մեռնում,  
Իր գաղափարն է իր գոյությունը,  
Իր չգոյությամբ հավիտյան ներկա:



\* \* \*


Ծշմարտությունը ինքն է իր վկան,  
Վեճերի մեջ է անունը հիշվում,  
Նրան փնտրում են, նրանից փախչում,  
Ինքը՝ թաքնված ու հալածական:






\* \* \*

Վերջին մի առավոտ ու երեկո վերջին,  
Այսպես ամեն օրն է առաջին ու վերջին,  
Օրը մի կյանք է, ու կյանքը մի օր,  
Այսպես անվերջ մի վերջ և սկիզբ առաջին:



\* \* \*

Անսահման է, անհուն, անհատակ,  
Անսկիզբ է, անվերջ, աներեր...  
Ոչ մի տեղ չսպառվող ժամանակ,  
Ոչ մի տեղ չհասնող ճամփաներ:



\* \* \*

Վերջն ի՞նչ է լինելու, ասում ես,  
Ասել է՝ փնտրում ես նոր սկիզբ:  
Գիտե՞ս, որ ինքդ իսկ այնտեղ ես  
Ինքդ ես թե վերջ, թե սկիզբ:

\* \* \*

Դու փնտրում ես այն, ինչը կրում ես,  
Քեզնից դուրս, քեզնից վեր ես փնտրում.  
Այդ դու ես, փնտրում ես ինքդ քեզ,  
Ինքդ քեզ, մոլորված քո ներսում:

\* \* \*

Սի փնտրիր քեզնում դու ոչինչ,  
Եվ ոչ իսկ քո ձևը ինքնին,  
Շարժվում է, անձև է ամեն ինչ,  
Ու ոչինչ հասու չէ քո մտքին:

\* \* \*

Ճանապարհի կեսը ես վաղուց եմ անցել,  
Շատ չի մնացել, հասնում եմ վերջին.  
Իմ լեռան թիկունքում ի՞նչ գանձեր եմ թաղել,  
Կարոտս անսահման ու հոգսերս չնչին:

\* \* \*

Սեզնից դուրս, անհայտ ի՞նչ կա այն կողմում,  
Լո՞ւյս է, թե խավար այնտեղ, ուր չկանք,  
Ցերե՞կ, թե գիշեր, նի՞նջ, թե արթնացում,  
Թե մի նոր սկիզբ այնտեղ, ուր կգանք:



ՉԱԽ ՉԵՌՔՈՎ


\* \* \*

Ծանիր ինքդ քեզ, ասում են ես ինձ.  
Ինքս որպես ե՞ս, ինքս որպես ա՞յլ.  
Շրջված մի դիմակ հայելու խորքից՝  
Ո՞վ ես, ասում է, ի՞նքդ ես, թե այլ:




\* \* \*

Иду я рядом с ложью,  
Улыбается она на ходу:  
-Иди, ведь легко со мною,  
Я тебе во всем помогу.  
-Нет, ты прожорлива, ненасытна,  
И если я сейчас солгу,  
Что же от меня останется?  
Останусь я вечно в долгу.




\* \* \*

-Ես գնում եմ, - ասաց մորուքավոր մի ծեր՝  
Հոգնած մի դերասան, ու միտք արեց մեկ էլ,  
Թե իրենից առաջ ուրիշ մեկը չկա՞,  
-Ես մնում եմ, - ասաց, - էնքան գնացող կա:  
Այսպես խոսեց ծերն ու... ընկավ ճանապարհ,  
ճանապարհը բացեց մի ջահելի համար:



## ԼՈՒՄՆԱՀԱԶ

Մթան մեջ հաչում է մի շուն,  
Հայիոյում մեկին անհասցե,  
Ո՞վ գիտե նրա թշնամուն,  
Լուսնակերպ կոտրված մի ափսե:  
Ինչո՞ւ է այդտեղ այդ ափսեն,  
Գիշերը անմարդ փողոցում,  
Հայոյանքն ունի իր հասցեն,  
Եվ իրավունքն իր՝ ամեն շուն:






**ՄԻՉԱՆՏՐՈՊԻԱ**

Աշխարհ ես նետված անեծքով,  
Անեծքի կնիքը թիկունքիդ,  
Եվ ինչո՞ւ, մեղավոր է ո՞վ,  
Ինքդ ես խորտակել հոգիդ:


Ո՞վ հասարակական կենդանի,  
Ընդամենն անասուն մտածող,  
Անասունը վեր է քեզանից,  
Անբան ու անմեղ մի որոճող:

Եվ ի՞նչ է պտուղը մտքիդ,  
Բառեր քեզանից վեր, ուր չկաս,  
Խոսքդ վեհ է, ստոր է հոգիդ.  
Կփրկվե՞ս, թե այդ էլ կմնաս:



\* \* \*

Ամեն լավ տղա մտել է խորան,  
Ծառա է Տիրոջ, ի՞նչ կասեր սրան.  
Պսակ ու կնունք, մատաղ օրհնության,  
Լա՛վ են տղերքը աղոթքն ի բերան:





\* \* \*

Հաշտ ու համերաշխ, իրար հավասար  
Ապրում են հիմա ամեն տեղ  
Աստված, թե սատանա, մեղավոր, թե արդար  
Մի չափ են, մի գին ու մի տեղ:




## ԵՐԵՎԱՆՅԱՆ ՍԵՐԵՆԱԳ

«Ես քեզ սիրում եմ, Հրո-Հրանուշ»,  
Գրված է պատին թունդ կարմիր գրով,  
Իսկ Հրոն չկա, չվել է Հրոն,  
Շողում է պատին հրավառ մի հուշ:

Որտե՞ղ ես, Հրո, ծովի էն ափի՞ն,  
Թե մեր քաղաքի մի ծայրամասում,  
Անունդ մի հուշ, այրվում է պատին,  
Հրեղեն հավքն է բակում քլածում:

Որտե՞ղ ես, Հրո, մոտի՞կ, թե հեռու,  
Ես որտե՞ղ փնտրեմ ստվերդ փախած,  
Աշխարհի ծայրի՞ն, թե մեր փողոցում,  
Հրաշունչ գրով այս պատը գրկած:



\*\*\*-ին

Խոսում ենք, քննում ու դատում,  
Ամպեր են կուտակվում խոհերի,  
Այստեղ են մի նեղ սենյակում  
Ճշմարիտը, շփոթմունքն ու բարին,  
Ինքդ էլ էսթետ խմբագիր,  
Վիճում ես անգիջում ու վճռում,  
Անհող, անմեղ ու անբասիր,  
Տիեզերքն ես չափում ու կշռում:



ՀԱՅԻ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ


Կաղ էշով քարավան ենք մտել,  
Գնում ենք, վա՛յ էն գնալուն,  
Ի՞նչ կա որ, էնքան ենք քաշվել,  
Էս անգամ տեղ ենք հասնելու,  
Ի՞նչ տեղ, էդ հաստատ չգիտենք,  
Մեզ ի՞նչ կա, գիտեցողը գիտի,  
Մի լավ տեղ մենք մեզ կդգենք,  
Կաղ էշն էլ իր ծամփան կգտնի:






Մ.

Գնաց աշխարհից նա կիսատ թողած  
Գործերը իր մութ, արված ու չարված,  
Իր ոչ մի գործին վկա չէր Աստված.  
-Ինչի՞ց ենք պրծել, – ասաց մոլորված:




ԻՆՔՆԱՆԱԽԱՏԻՆՔ

Ինչո՞ւ ես քար նետում ճահիճը,  
Ինչո՞ւ ես ջուրը պղտորում,  
Մաքրե՞լ ես ուզում ճահիճը,  
Թե ճահճում քո տեղն ես մաքրում:



\* \* \*

Սուտն ամեն անգամ առաջ է մի քայլ,  
Ճշմարտությունը միշտ է ուշանում,  
Ու պետք է նա ո՞ւմ, ինքն իրեն միայն,  
Անպատեհ մի պահ, անպատեհ տեղում:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ  
ԹԱԱՐԳՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Բանաստեղծությունն սկզբունքորեն անթարգմանելի է. ինքն է իր գոյածնն իր նյութով ու կազմակերպվածքով, որպես ավարտված, անմիջնորդելի իրականություն: Անթարգմանելիությունն այստեղ էսթետիկական օրենք է, առավել ևս՝ եթե գործ ունենք դասական արժեքների հետ:

Այնուամենայնիվ, բանաստեղծությունները թարգմանվում են, և ամենից շատ դասականները:

Ի՞նչ անհրաժեշտություն է այդ:

Եվ ի՞նչն է թարգմանվում՝ բա՞ռը, մի՞տքը, իմա՞ստը, ո՞ր իմաստը՝ պատկե՞րը, տրամադրություն՞ներ, տպավորություն՞ներ... Իսկ որտե՞ղ են դրանք, ինչպե՞ս և ինչով են փոխարինվում, կամ ի՞նչ չափով:

Չետամուտ այս և նման հարցերի, թերթում են պուշկինյան չափածոն տարիներ ի վեր, ականջիս ռուսական բեմի վարպետների ծայնագրված խոսքը՝ տոնային արվեստի բացառիկ դրսևորում: Չամաձայնելու ենք թերևս այն տեսակետին, որ շփումն օտար լեզվի հետ արթնացնում է մայրենի լեզվի հնարավորությունները, բացահայտում «գաղտնի» հարթություններ՝ հղկում գրական որակը, ճշտում, հստակում անհատի լեզվամտածողությունը: Այստեղից էլ, ըստ

իս, սկսվում է թարգմանությունը բանաստեղծական խոսքի: Ի՞նչ է այդ, եթե ոչ հայտնագործումը գեղարվեստական մեկ այլ որակի, ներգգայելի իրականության նոր շերտի, արտալեզվական նոր կոնտեքստի, և գուցե վերադարձ լեզվին, այս երևույթի ավելի խորն զգացված, գիտակցված ընկալումով:

Բանաստեղծության թարգմանությունը ոչ այնքան օտար հեղինակին ծանոթացնելու միջոց է՝ ուղղված նրա լեզուն չիմացողին (ի՞նչ պարզունակ խնդիր), որքան զրույց հեղինակի հետ մեկ այլ իրականությունից, գեղարվեստական հաղորդակցման եղանակ, մայրենի լեզվի բանաստեղծական հնարավորությունների բացահայտում: Այս նկատառումով են դիմել պուշկինյան չափածոյին և ամենևին ոչ բանաստեղծի հավակնությամբ, այլ բանասերի հետաքրքրությամբ:

-Թումանյանից հետո՞..., - տարակուսում է նախապաշարված զրուցակիցս, չմտածելով, թե Թումանյանի թարգմանությունները քանիսն են և ինչո՞ւ այդտեղ էլ ավարտվելու է մեր շփումը Պուշկինի բանաստեղծական աշխարհի հետ:

Թումանյանի թարգմանությունները թվով հինգն են. «Եթե իրավ է, որ գիշերները...» (1890թ.), «Ջրահեղձը», «Օլեգի երգը» (1899թ.), «Ձմեռվա իրիկունը» (1909թ.), «Սերիի երգը», «Խրախճանք ժանտախտի պահին» ողբերգու-

թյունից (1910 թ.): Այս հինգին գումարվում է չորս տող, «Ազատությունից» (1905 թ.):

Եվ այլևս ոչ մէքայլ, կյանքը դեմ է առել հայոց հանճարի պատվանդանի՞ն: Թումանյանը ճանապարհ է փակում, թե ճանապարհ է ցույց տալիս:

Ոչինչ չենք փորձում ծշտել, անգամ «Ջրահեղձի» երկու անփույթ տողը.

- Դեսը կորեք այ լակոտներ,  
Եկեք, բան տամ ձեզ – տանեմ...

Вы, щенки! За мной ступайте!  
Будет вам по калачу...

Վանկաշեշտային մեջընդմեջ (ութ-յոթ, ութ-յոթ) համաչափությունը, որ համապատասխան է բնագրի ռիթմամեղեդայնությանը, հասնում է մինչև վերջին ութնյակի հինգերորդ տողը, և (ընթերցողը դա կնկատի) այստեղ ավելանում է մեկ գաղտնավանկ, իսկ հաջորդ տողն ազատ է, չի կապվում թեկուզ ռիթմական ասոնանսով.

Խառն[ը]վում է օրն առավոտից,  
Գիշեր գալի բուք ու մութ,  
Ու խեղդվածը ամբողջ գիշեր  
Բախում դուռ ու լուսամուտ:

Уж с утра погода злится,  
Ночью буря настает,  
И утопленник стучится  
Под окном и у ворот.

Չենք փորձում կասկածի ենթարկել հարյուրամյա վաղեմիություն ունեցող դասական մի թարգմանություն: Չենք մոտենում նաև «Ձմեռվա իրիկունին», որ հայ թարգմանական արվեստի գագաթն է, ոչ էլ «Մերիի երգին», որի ռիթմամեղեդային պատկերը նույնքան համարժեք է բնագրին: Այս երեք թարգմանությունն էլ մնում են դասական և անձեռնմխելի: Նկատենք, որ Թումանյանի առաջին թարգմանության («Եթե իրավ է...») և «Ձմեռվա իրիկունի» միջև ոչ միայն որակական մեծ տարբերություն կա, այլև երկու տասնամյակ, որի ընթացքում Թումանյանը գտել է այն տոնայնությունն ու չափը, որ հատուկ լինելով հայ ոտանավորին, հարազատ էր լինելու նաև ռուսականին ու եվրոպականին: Թումանյանի պատկերային համակարգը սակայն տարբեր է, ստեղծում է այլ մթնոլորտ ու տրամադրություն, որ իհարկե, ռուսական չէ: Համանմանության տպավորությունն ստեղծվում է վանկաշեշտային համաչափությամբ: Թումանյանը պուշկինյան ոտանավորը ենթարկել է իր խոհին ու ապրումին, տարել իր ներշնչումների աշխարհը, և այլ կերպ լինել չէր կարող: Բանաստեղծները

այդպես են թարգմանում և դա երբեմն կոչում են «նմանողություն», որ հատուկ է անցյալ դարի պոետներին, նաև Պուշկինին ու Թումանյանին:

Թումանյանի թարգմանություններն ունեն այդ միտումը և մտածել են տալիս, թե բանաստեղծության ո՞ր շերտերն են թարգմանելի, ինչը ինչով փոխարինել, բառը բառային համարժեքո՞վ... Եթե Թումանյանին նախորդող ու ժամանակակից կամ հետագա փորձերը, ներառյալ Յովհաննես Յովհաննիսյանի ու Ալեքսանդր Ծատուրյանի թարգմանությունները, դժվար է կատարյալ համարել, պատճառն այն է, որ բառերով են մտածված, ոչ թե բառեր են փնտրված արտալեզվական ոլորտն արտահայտելու համար: Պոետական հանդգնությունն է պակասել մեր կրթված գրագետներին: Դա չի պակասել Նաիրի Ջարյանին, որի թարգմանած «Յուշարձանն» այնուամենայնիվ հուշում է Պուշկին: Երկյուղածությունը հանճարի հանդեպ Չարենցի նման բանաստեղծին իսկ զսպել է: Անավարտ ու անկատար փորձեր կան այստեղ, որոնց շարքում իր պարզությամբ ու դասական մաքրությամբ բնագրին շատ հարազատ է մեկը՝ երգային հատված «Տեսարաններ ասպետական ժամանակներից» անավարտ պիեսից:

Տեսել էր նա տեսիլ մի վառ,  
Մտքի համար անբնին,

Եվ տեսիլքն այդ հար հավիտյան  
Դրոշմվել էր իր սրտին:

Он имел одно видение,  
Непостижное уму,  
И глубоко впечатление  
В сердце врезалось ему.

Կարծես շարունակվում է Թումանյանի նախանշած ճանապարհը, բայց ոճն է տարբեր՝ նորագույն հայերեն, և պատկերային համակարգն էլ տեղայնացված չէ: Չարենցը միտում է այնտեղ, որտեղից գալիս է Պուշկինը՝ արևմտաեվրոպական ուշ միջնադար, իսպանական քնարա-վիպական երգեր, ասպետական ռոմանս, «Ռոմանսերո»:

Шёл стеная, кабальеро,  
Извела его печаль,  
На нем траурное платье  
Грубый шерстяной сайяль.

Կարևորն այստեղ ոչ թե հանգային կանոնավոր ձայնակցումներն են, այլ ութ-յոթ վանկանի տողերի մեկընդմեջ, համաշեշտ համաչափությունը՝ զույգ տողերի ասոնանսային կապով: Սա Վերածնության դարաշրջանի իսպանական ոտանավորն է՝ հաստատված նաև Լուպե դե Վե-

գայի տեսությամբ: Բայց թերթենք Թումանյանի և Իսահակյանի 90-ական թվականների բանաստեղծությունները:

Ո՛հ, մեղմացնել չես կարող դուն  
Սաստկությունը տանջանքիս,  
Եվ հաշված են թույնով լեցուն  
Սակավ ժամերը կյանքիս:

Եթե ասենք թարգմանություն է... Ի՞նչ տարբերություն: «Ձմեռվա իրիկունն» ավելի բնաշխարհիկ է հնչում: Եվ ահա նույն ռիթմամեղեդին Իսահակյանի ժողովրդական ոճի երգերում:

Հե՛յ, Մանթաշի նախշուն հավքեր,  
Իմ դարդս որ ձերն եղներ,  
Էդ ձեր գառ-վառ խաս փետուրներ  
Կըսենային, քանց գիշեր:

Արտաքին տպավորությամբ կարող է թվալ գրառված բանահյուսություն: Բայց այս ռիթմով վերադառնանք «Ռոմանսերոյին» և դարձյալ՝ Թումանյանին:

Հե՛յ, պարոններ, ականջ արեք  
Թափառական աշուղին...

Հայերենը հրաշալի տեղավորում է «օտար» եղանակները, քանզի համաչափությունն (սիմետրիան) ստեղծվում է ոչ բառային, այլ տակտային շեշտերով (քայլ, ոտք, стопа) և տակտերի կամ անդամների քանակով: Այլևս ի՞նչ «իսպանական ոտանավոր», եթե դա օրգանապես կարող է տեղավորվել Արսեն Բագրատունու ասած «հայկական չափում», այն է՝ «ոչ զվանկից՝ այլ զանդամոցն թիւս չափէ <...> յորում եւ է իսկ ոտանաւորս զուգայարմար չափակցութիւն...»: Եթե հնարավոր է մեկ խորեական տողով և շարունակության մեջ յամբ-անապեստով խորեական ոտանավորի տպավորություն ստեղծել, ինչպես ստեղծել է Թումանյանը, կամ հանգր դյուրությամբ փոխարինել ասոնանսով, ինչպես երբեմն՝ Իսահակյանը, ավելի հաճախ Չարենցը, նշանակում է պոեզիայի հնարավորությունները հայերենում այլ են, և տարբեր բաներ են մետրիկան ու պոետիկան, որ հաճախ նույնացնում են մեր գրականագետները:

Այս է ասում 19-րդ դարից եկող հայ նոր բանաստեղծության փորձը, և այստեղ է Պուշկինին հայերեն կարդալու ելակետը:

Չլիներ Պուշկինը, ռուս բանասեր-թարգմանիչները հազիվ թե կարողանային թարգմանել արևմտաեվրոպական ռոմանսները կամ վերածնության դարաշրջանի իսպանական դրաման: Չլիներ Թումանյանի ու Իսահակյանի պոեզիան,



ես հազիվ թե փորձեի մոտենալ պուշկինյան չափածոյին: Իրագեկ ընթերցողը կնկատի, որ այդ հենքի վրա են հյուսված «Թալիսմանը», «Չարքերը», «Կյանքի սայլը», «Ֆարիադ բեկին», «Ճամփի գանգատ», «Շքեղ քաղաք, աղքատ քաղաք», «Իզուր պարզ և պատահական...» և այլ թարգմանություններ: Բայց «խսպանականը» պուշկինյան չափածոյի մեկ առանձնահատկությունն է: Թունանյանի փորձն այստեղ ավարտվում է, և շարունակում ենք ռիթմ ու խոսքային բանաձևեր որոնել բանաստեղծական այլ ակունքներում:

Չափածոյի գլխավոր սկզբունքը տակտն է, երկրորդը՝ հանգը, որ 19-րդ դարի ռուս բանաստեղծության ողնաշարն է: Հայ բանաստեղծությունն առավելապես վանկային է և հակված է ասոնանսային ձայնակցումների: Եվ եթե հայերենի բառաշեշտը թույլ է, նշանակում է թարգմանության մեջ հարմար է ձայնակցող տողերի վանկային համաչափությունը: Կարևոր պայման է սա, եթե թարգմանվող բնագիրը շեշտային է: Բայց արվեստի գաղտնիքն այս չափումների մեջ չէ, և թարգմանությունը կարող է ոտանավորով ոչնչացնել բանաստեղծությունը: Այն ինչ արվեստ է մեկ լեզվի նյութով ու հենքով, չի կարող կրկնվել այլ լեզվում: Տարբեր լեզուների բանաստեղծական հնարավորությունները, եթե կարող են հավասարակշռվել, ապա ոչ հնչյունական ու

բառային արժեքներով, ոչ էլ քերականության կամ տաղաչափության կշեռքի վրա: Թարգմանության մեջ հարկ է լինում երբեմն փոխել դեմքը, ժամանակը, խոսքի մասը և ոչ անպայման հանգի կամ ռիթմի նկատառումով: Հարկ է լինում, ասենք, հաջող գտնված հանգը քաշել տողամեջ կամ խախտել վանկերի քանակը որևէ տողում՝ Բագրատունու գտած «հայկական չափի» օրենքով, որ նուրբ գյուտ է և, ո՛վ զարմանալի, մեկ-մեկ գործում է պուշկինյան չափածոյում: Պարզապես, արվեստի օրենքները տաղաչափությունից դուրս են:

Ուրեմն ի՞նչն ենք թարգմանում:

Բանաստեղծությունը խոսքի երաժշտությունն է, ռիթմը երաժշտության հենքը, և ամեն մեղեդի հենվում է որոշակի ռիթմական ցանցի վրա, ստեղծելով ժամանակային զարդանախշ, գույն ու երանգ (նյութանս) տալով զարդանախշին:

Ոտանավորը նման մի ցանց է, որ տեղավորում է բառերը, տրոհում ու միավորում որպես տակտեր, այն է՝ հակադրում է բառային արժեքին, ենթարկում այն տակտային իներցիայի: Ինչ է արվելու, եթե ոչ ուժեղացվելու է բառն իր նշանակալով, որպես ներքին ձևի տարր, ի հակադրություն արտաքին կերպի: «Բառը մի աշխարհ է» (Հ. Թունանյան), և շարունակենք՝ այդ աշ-

խարիչը դրված է ռիթմամեղեդային կարգի մեջ, տեղավորված հանգային շրջանակում:

Այս է բանաստեղծությունը որպես իմաստ խնդրող կառույց կամ ձև:

Բանաստեղծական ձևը սոսկ տաղաչափական համակարգը, հանգավորման սխեման կամ ռիթմամեղեդային պատկերը չէ, այլ բոլոր լեզվական և արտալեզվական, արվեստային և արտաարվեստային շերտերի ամբողջությունը, որպես կազմակերպվածք: Կա լեզվական ոլորտից և արտաքին կերպաձևերից դուրս, ներհայեցողական մի իրականություն՝ ներքին ձև, որ թարգմանելի չէ, այլ թերևս փոխարինելի: Այստեղ է գաղտնիքը: Թարգմանությունը փոխարինումն է ոչ այնքան նշանների, որքան նշանակյալների: Գեղարվեստական մի իրականություն ենթարկվում է լեզվական վերակերպավորման և անխուսափելիորեն մղվում այլ արտալեզվական ոլորտ, հանգում մեկ այլ ներքին ձևի՝ բնագրին համախոս:

Բանաստեղծական թարգմանության նպատակը ոչ թե լեզվական համարժեքության հասնելն է, այլ մոտենալը գեղարվեստական համարժեքության: Սա նշանակում է փնտրել ձևին համախոս ձև՝ գեղարվեստա-հոգեբանական իմաստի, տոնի ու ռիթմամեղեդային տպավորության մի ամբողջություն, որն իմաստաբանորեն

տարբեր լինելով և դրվելով բնագրի կողքին, օտար չլինի նրան գեղարվեստորեն:

Այս է սկզբունքը:

Ի՞նչ չափով է դա իրականացված, ընթերցողն է որոշելու, եթե գիտե բանաստեղծություն կարողալ (դա յուրահատուկ լսողություն է), եթե երբևէ ներշնչվել է ռուսաց հանճարի խոսքով:

Ա. Ս. Պուշկին

**ՀՈՐԵՂԲՈՐՍ, ՈՐ ԻՆՉ ԿՈՉՈՒՄ Է ԵՂԲԱՅՐ**

*Խելքս դեռ չեմ թռցրել բարոսյան հանգերից  
Ու դեռ չեմ օրորվում թամբին Պեգասի,  
Գոհ եմ, բայց ուրախ չեմ ու հեռու չեմ ինձնից.  
Ո՛չ, ո՛չ, դուք եղբայր մի անվանեք ինձ,  
Չորեղբայրս եք բարձունքում Պառնասի:*



**ՕԳԱՐՅՈՎԱՅԻՆ, ՈՐԻՆ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԵ  
ՈՒՂԱՐԿԵԼ ԷՐ ԻՐ ԱՅԳՈՒ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

*Միտրոպոլիտն, անբարտավան անպատկառ,  
Իր պարտեզից քեզ խնձոր է ուղարկում.  
Ասել կուզի՝ ինքն էլ Տիրոջն հավասար  
Մի աստված է եղեմական իր այգում:*

*Ամեն ինչ քեզ՝ տիեզերքի դիցուհուն.  
Գուցե ժպտաս ու սրբությանը հաղթես,  
Խառնես հոգին, խելքից գցես ծերունուն,  
Երակներում մեղքի հորը բորբոքես:*


*Ու թե տեսավ նա ժպիտը քո կախարդ,  
Կմոռանա սուրբ պատկերը Տիրամոր,  
Նա կլինի քո տաճարում լուսարար,  
Սաղմոս կասի նա քեզ համար ամեն օր:*






## ԺՈՒԿՈՎՍԿՈՒՆ

Ամենքի համար չէ քո երգը,  
Պետք չէ, որ ամենքը քեզ լսեն,  
Քննադատը նախանձ ու տգետ է,  
Գրասերը խեղճ է ու նսեն:  
Բայց դու կաս, լսում են քո երգը,  
Անաչառ բարեկամդ է լսում.  
Բանաստեղծ չեն ծնվել ամենքը,  
Մուսաներն ամեն տեղ չեն հասնում:  
Բախտավոր է նա, ով գիտե  
Խորհուրդը քո վսեմ երգերի,  
Ով քեզ սիրում է ու սրտիդ մոտ է,  
Ում հասու է խոհը հանճարի:




## ԺՈՒԿՈՎՍԿՈՒ ԳԻՄԱՆԿԱՐԻՆ

Քաղցրանվագ, զնգուն քո հանգերով  
Կհասնես դարերի նախանձելի հեռուն,  
Կհառնեն երազներ, փառքի տենչ ու կորով,  
Կսփոփվեն ցավերը լուռ, և թախիժը անհուն  
Կցնդի, կսթափվեն հոգիները խռով:



«ՈՌԻՍԱՅ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»  
ՀԵՂԻՆԱԿԻՆ

Պարզ է ու շքեղ քո «Պատմությունը»  
Ոգով անաչառ ու հստակ,  
Ասում է, թե քաղցր է բռնությունը,  
Մեզ պետք են շղթա ու մտրակ:



ՀԵՔԻԱԹՆԵՐ

Ուռա՛, հայրենիք է գալիս  
Բռնակալը քոչվոր,  
Փրկիչն է դառը լալիս,  
Եվ ազգը խեղճ ու մոլոր:  
Տիրամայրը անբախտ աղերսանք է լալիս.  
«Մի լար որդիս, իմ Տեր,  
Ահեղ թագավորն է գալիս»:  
Թագավորն ավետում է հույսեր.

«Իմանա թող ազգը մեր,  
Ինչ որ հայտնի է աշխարհին.  
Գալիս են, ես են ձեզ տեր,  
Օտար կնիքն իմ թիկունքին:  
Ես կամ, ես ողջ են, ցնձա, իմ ժողովուրդ,  
Ես կուշտ են, առողջ ու պարարտ,  
Թերթերն են գրում ամենուր՝  
Խելոք են, բարի ու արդար:

Լսեք ինձ՝ ինչ են խոստանում  
Եվ ինչեր պիտի դեռ անեն.  
Մեկին թոշակի են դրկում,  
Մյուսին գժատուն կտանեն...  
Իր տեղը կղնեն օրենքը,

Եվ այն սրիկային ոստիկան  
Կբշեն, ձերն է իրավունքը.  
Իրավունքը լինի ձեզ պաշտպան»:


Լալիս է մանուկը օրոցքում,  
Լալիս է ահից ու հրճվանքից.  
«Հայրիկը ինչո՞ւ է կատակում,  
Հայրիկը ի՞նչ է բերել ինձ...»  
Մայրը երգում է օրոր. «Մանկիկ իմ, ուշ է ննջիր.  
Գիշեր է, ինչո՞ւ չես քնում.  
Դու լսիր, հեքիաթները լսիր,  
Հայր արքան հեքիաթ է պատմում»:



## ԱՊԱՔԻՆՈՒՄ

Քե՞զ տեսա արդյոք, քնքուշ իմ բարեկամ,  
Թե պատրա՞նք էր գուցե, երա՞զ էր մշուշոտ,  
Ուղեղի մորմո՞ք էր, զառանցա՞նք էր անկամ,  
Հեռացող տեսի՞լք էր, տե՞նդ էր ու կարոտ:  
Դո՞ւ էիր, սիրուն աղջիկ, որ եկար ինձ այցի  
Իմ հիվանդ ու անհույս, իմ մթնած օրերին,  
Զինվորի հագուստով, շփոթված, կանացի,  
Ես քե՞զ տեսա արդյոք թեքված իմ սնարին...  
Ծանաչեցի ես քեզ, դու էիր, ուրիշ էլ ո՞վ,  
Մթնում քեզ էի փնտրում, հեղձուկ էր ու տապ,  
Քեզ էի նայում անուժ, նվաղած աչքերով,  
Հավվում էին իմ մեջ անուրջներ ու տազնապ,  
Երբ քո շունչն զգացի ու ճակատիս այրվող  
Քո համբույրը տամուկ, արցունքները քո տաք...  
Այդ ի՞նչ եղավ, Աստված.  
Թրթռաց իմ սրտում կյանքի հուրը նորից,  
Երակներս մաքրեց մահվան թույնից,  
Քո տեսիլքն աչքիս մշուշվեց ու դողաց...  
Օ՛, իմ անսիրտ ընկեր, մեռնում եմ կարոտից,  
Գիշերը լուռ է, այրվում է ճակատս թաց,  
Ե՛կ քո սերն է այրում ինձ:  
Հայտնվիր հրաշքի պես, ո՛վ դու կախարդ  
աղջիկ,  
Եկ, աչքերդ տեսնեմ երկնքի պես մաքուր,

Կուրծքդ զրահապատ, թիկնոցը ռազմիկի,  
Սաղավարտդ պողպատ, գոտին քո ամրակուռ...  
Դե՛, ե՛կ, շտապիր, զինվոր իմ հրաշալի.  
Սպասում եմ քեզ, թող այս գիշերն անցնի,  
Վերադարձրել է Աստված մարմինս տկար,  
Ու սրտիս տազնապը ցանկալի,  
Կյանքս խենթ ու խելառ, ու քո սերը... գաղտնի:



N.N.

(Վ. Վ. Էնգելզարդին)


Ես լավ պրծա Եսկուլապից,  
Յյուծված, խուզված, ապաքեն,  
Նրա տանջող, դաժան թաթից,  
Սոռացած ահ, ցավ ու քեն:  
Եվ ընկերներն իմ վայելքի,  
Եվ խոհ, և՛ նինջ, և՛ երագ,  
Առաջվա պես եկան այցի  
Սենյակը իմ նեղ ու պարզ:  
Դու էլ արի, ինձ սփոփիր՝  
Ոտքի ելած հիվանդիս,  
Ով դու անհոգ, ծուլ անբասիր,  
Հին բնակիչ Պինդոսի.  
Քեզ ծնել են ազատ սերը,  
Դիոնիսոսն ու գինին,  
Աֆրոդիտեն է քո կուռքը...  
Թողնենք քաղաքը այս սին,  
Թողնենք նրա աղմուկն ունայն,  
Հմայքը պաղ, գորշ գետի,  
Խոսքեր, շշուկ ու զանազան  
Բանբասանքներ տմարդի:  
Ինձ կանչում են դաշտ ու բլուր,  
Այգի, անտառ ու ծորակ,  
Գետակի ափ, լորենու բույր

Ու գյուղական ազատ կյանք:  
Ձեռքդ տուր ինձ, կգամ քեզ հետ  
Թխապուտ աշնանը գուցե,  
Ու կխմենք մենք իրար հետ,  
Լիասիրտ կգրուցենք  
Տխմար, գոռոզ մարդու մասին,  
Եվ ինքնական ծորտության,  
Ու երկնային Տիրոջ մասին,  
Սեկ-մեկ էլ՝ մեր տերության:



## ՏԱՆ ՈԳՈՒՆ

Խաղաղ իմ կալվածքի անտես պահապան,  
Աղոթում եմ քեզ, իմ տան բարի ոգի,  
Պահպանիր գյուղը, անտառն ու իմ այգին,  
Համեստ իմ հարկի անդորրն անապական:  
Թող չմրսեն արտերն աշնան պաղ անձրևից  
Ու վրահաս ձմռան հողմերից չարաղետ,  
Թող արտերը ծլեն, ծյունը գա ձմռան հետ,  
Դաշտը տամուկ լինի ձմռան ծյունից:  
Եղիր թաքուն պահակ հայրենական իմ տան,  
Գիշերն ահ գցիր սիրտը գողի,  
Պահպանիր կրակն իմ օջախի,  
Դուռ, կտուր, տանիք ու ծխան:  
Չար աչքը խափանիր դռան շեմին իմ տան,  
Շրջիր ին տան կողքին աներևույթ, անտես,  
Սիրիր բակն իմ փոքրիկ, անդաստան ու  
պարտեզ,  
Արահետներն այգու ու գետակի ճամփան,  
Եվ դուռը ճռռացող, և ցանկապատը հին,  
Բլուրները կանաչ ու մամռոտ,  
Ուր թափառել եմ ես ծույլ ու երազկոտ,  
Ուր թղկին է խշշում, ծաղկում է լորենին,  
Ճախրում են մուսաներ ու կարոտ:





## ՋՐԱՀԱՐՍԸ

Լճի ափին, խոր կաղնուտում,  
Կյանքից, մահից մոռացված,  
Մի ճգնավոր էր աղոթում,  
Մի սուրբ, մի ծեր մենակյաց:  
Ու իր ձեռքով, սրտով հոժար,  
Կանաչ մի տեղ բացատում  
Փորել է իր փոսը մահվան  
Ու սպասում էր Աստծուն:

Այսպես ամռան մի իրիկուն  
Աղոթում էր ծերունին  
Ու խնդրում էր արդար մի քուն,  
Տեսիլք եկավ իր աչքին.  
Տաք մառախուղ ելավ լճից,  
Ու անտառից պաղ լուսին.  
Սահե՛ց, սահեց... Մթնեց նորից.  
Ջրին նայեց ծերունին:

Նայեց, տեսավ, ահը սրտում,  
Գուցե աչքին իր թվաց,  
Թվաց՝ լճի ջուրն է եռում  
Ու խաղաղվում է հանկարծ:  
Մի պահ, թեթև, ինչպես քամի,

Լեռան ձյունի պես մաքուր,  
Ջրից ելավ մի հողանի,  
Միրուն մի կին պաղ ու լուռ:

Նայում է ծեր ճգնավորին  
Ու թաց մազերն է սանրում,  
Ահից դողում է ծերունին,  
Նայում է ու հմայվում:  
Ու կանչում է կինը նրան,  
Կանչում, աչքով է անում  
Ու մարում է աստղի նման  
Չքվում, կորչում խավարում:

Ամբողջ գիշեր ծերը մռայլ  
Աչք չփակեց սարսափից  
Ու չաղոթեց նա մյուս օրը  
Էն աղջկա հմայքից:  
Ու կաղնուտը մթնեց նորից,  
Մթնեց լուսինն անպի տակ,  
Ու աղջիկը ելավ ջրից,  
Լուսնի լույսի պես գունատ:

Նայում էր նա, գլխով անում  
Ու համբուրում էր հեռվից,  
Ծչում, ծողփում ալիքներում,  
Լալիս, հրճվում ծիծաղից:  
Ու կանչում էր, հառաչում էր,  
Ասում՝ ծերուկ, ե՛կ ինձ մոտ.


Ձայն էր տալիս, կշկշու՜մ էր,  
Լիճը խաղաղ էր ու մութ:


Երրորդ օրը խել ծերունին,  
Լճի ափին կախարդված,  
Աչքն էր հառել պաղ ջրերին...  
Լուռ էր կաղնուտն ու մթնած:  
Գիշերն անցավ, ու ծերունուն  
Էլ չտեսան ոչ մի տեղ.  
Երեխեքն էին միայն ջրում  
Ճերմակ մորուքը տեսել:



## ՎՅԱԶԵՄՍԿՈՒ ԳԻՄԱՆԿԱՐԻՆ

Բախտն իր շնորհը չի խնայել քեզ.  
Գուցե սխալմամբ, կամ թե հենց այնպես,  
Տվել է քեզ խելք, և՛ գանձ, և՛ պատիվ,  
Եվ ազնիվ մի սիրտ ու հեզնոտ ժպիտ:







## ԷՊԻԳՐԱՄ


(Կոնս Ֆ. Ի. Տոլստոյին)

Այս զագրելի, անարգ կյանքում  
Թաթախվել է մինչ հատակ,  
Պղծել է իր վարք ու բարքով  
Տիեզերքը բովանդակ,  
Բայց խելքի է եկել հիմա  
Ու իր մեղքերն է քավում.  
Տիրոջը փառք, նույն գողն է նա  
Խաղատանը, թե ծովում:



\* \* \* -ին

Ինչո՞ւ թախիծդ տարածամ  
Սնում ես ցավով ամեն օր,  
Սպասում ժամին անջատման,  
Վեհերոտ սրտով ու անգոր:  
Մոտ է վախճանը, դու գիտես,  
Դեռ կգան օրեր տանջանքի,  
Լռության դաշտերում կփնտրես  
Չուշերը հեռացող քո կյանքի:  
Երբ մենակ կլինես ու անհույս,  
Աքտորում, մահվան դեմ ու լացի,  
Կտենչաս խոսքեր սրտահույզ,  
Գգվանք ու շշուկ կանացի:




\* \* \*

Ձեզ չեմ ավստսում, իմ գարնան օրեր,  
Ունայն ցնորքներ, սիրո, զգվանքի,  
Ձեզ չեմ ավստսում ամռան գիշերներ  
Երագով լեցուն ու երգ սրնգի:

Ձեզ չեմ ավստսում, ընկերներ անհույս,  
Շողշողուն թասեր, խնջույքի պսակ,  
Ձեզ չեմ ավստսում, ջահել, սիրահույզ  
Օտար համբույրներ ու սրտի խաբկանք:

Բայց ո՞ւր եք դուք, ո՞ւր, պահեր մոռացման,  
Սրտի լռություն, խաղաղ բուսեցներ  
Ու կիրքը այրող, տենդը ներշնչման...  
Չետ եկեք նորից իմ գարնան օրեր:



## ԴԱՇՈՒՅՆ

Լեմնոսյան հուրն է կոփել անագորույն  
Բազկի համար ահեղ Նեմեզիդի,  
Գաղտնի պահակ կամքի, վրիժառու դաշույն,  
Դու վերջին վճիռ վիրավորված սրտի:

Ուր լուռ է Աստված, և օրենքներն են լուռ,  
Դու ես հույսը միակ ու վկան,  
Թաքնված գահերի տակ, ինչպես սարսուռ,  
Եվ զգեստների տակ տոնական:

Ինչպես դժոխքի լույս, աստծու կրակ,  
Քո լուռ սայրը դողում է չարագործի աչքում,  
Ու պայթում է ամպրոպը շողարձակ  
Դավադիր խնջույքում...

Ու կգտնի չարին քո հարվածը հատու,  
Ուր էլ լինի՝ ծովում, դաշտում, թե քարի տակ,  
Իր մեղքերի ծոցում, թե խորանում Աստծու,  
Թեկուզ քնած լինի խաղաղ իր հարկի տակ:


Ռուբիկոնը անցավ ահեղ Կեսարն անպարտ,  
Ու Չռոմը դողաց, օրենքը խոնարհվեց,  
Բայց Բրուտոսն անհաշտ քեզնով վճռեց

Բախտը փառամուխի, և արյունով ներկվեց  
Պոմպեոսի մարմարիոնը հպարտ:

Դժոխքի ծնունդը, նզովից արմատ, զարհուրած  
Կճչա ահաբեկ ու քինոտ,  
Ու կելնի դահիճը, քարշ կտա գլխատված  
Ազատության դիակն արյունոտ:  
<...>

Օ՛, արդար պատանի, բախտի դու ընտրյալ,  
Գլխատվել է քո դարը, օ՛ Ջանդ,  
Մնացել է վրեժդ, անունդ է մնացել,  
Կախադանդ որպես ահազանգ:

Քո հայրենիքում, որպես հիշատակ,  
Հատուցման ահեղ հիշեցում,  
Քո շիրմաքարին գրերի տեղակ  
Շողում է հրավառ մի դաշույն:




## ՏԱՆԵՐՈՐԳ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Աչք մի դիր ուրիշի բարիքին,  
Տեր, գիտեմ, քո պատվիրանն է սա,  
Դու էլ ինձ գիտես, իմ հոգին,  
Սրտիս հետ ի՞նչ անեմ, ասա:  
Հարևանիս վատը չեմ ուզում,  
Չեմ ուզում նրա հողն ու այգին,  
Ես գոհ եմ, ես չեմ նախանձում,  
Ինչ անեմ արտը, էշն ու ձին:  
Աչք չունեմ փողին, ապրանքին,  
Չեմ ուզում ոչ մշակ, ոչ էլ տուն,  
Կիլեի ես նրա աղախնին,  
Թե ջահել լիներ ու սիրուն,  
Կսիրեի ես նրա կողակցին,  
Թե ինքն էլ գին տար իմ սիրուն:  
Մեղա՛, ես անգոր եմ քո դեմ,  
Ես թույլ եմ, խանդոտ ու նախանձ,  
Օ՛, սիրտս ազահ է, ի՞նչ անեմ,  
Սիրում եմ վայելք ու կանանց:  
Չլինե՞մ կրքերին իմ գերի,  
Բայց սիրտս արդյոք կների՞,  
Կթողնի՞, որ ատեն ինձ, տանջվեմ,  
Ձոհեմ ինձ պարտքի ու պատվի,  
Չսիրեմ պտուղը դրախտի  
Ու լռեմ քո վախից, չշնչե՞մ:



## ՊԻՇԵՐ

Քեզ համար իմ ծայնը, և քնքուշ, և թախծոտ,  
Խռովում է գիշերվա լռությունը սահող,  
Ու տխուր առկայծում է կանթեղը մահճիս մոտ,  
Թրթռում է, հյուսվում են հանգերը լուսաշող,  
Կարկաչում են, քո սիրո առվակը հոսում է  
Մթան մեջ, քեզնով լի, հայացքիդ տակ անտես.  
Նայում ես, ժպտում ես, խոսքերդ լսում եմ.  
Օ՛, քնքուշ իմ ընկեր, սիրում եմ, քոնն եմ ես...




## ԿՅԱՆՔԻ ՍԱՅԼԸ

Ծանր է բեռը, կարծ է ճամփան,  
Ու գնում է սայլը հին.  
Ժամանակը ծեր կառապան,  
Քշում, քշում է իր ձին:

Առավոտ վաղ, սրտով առույգ,  
Ցավ ու վայելք մոռացած,  
Քշում ենք մեր սայլը անհոգ.  
Գնա՛, քո հերն անիծած...

Իսկ կեսօրին արդեն հոգնած,  
Քարոտ լեռան ճամփեքին՝  
Զգո՛ւշ, հիմար, քաշում է ցած,  
Դեմ ենք առնում քարափին:

Ու նիրհում ենք մինչ օթևան,  
Ու ծռռում է սայլը հին,  
Ժամանակը ծեր կառապան  
Քշում է իր հոգնած ձին:



## ՎՈՐՈՆՑՈՎԻՆ

Կես-ազնվական, կես-վաճառական,  
Մի կեսով տգետ, մյուսով գիտնական,  
Կիսաանգգամ, մնում ենք հույսով,  
Որ ամբողջական լինի այդ կեսով:



\* \* \*

Ինչո՞ւ աշխարհ եկար, ո՞վ քեզ ուղարկեց.  
Բարո՞ւ թե չարի առաքյալն էիր դու...  
Ինչո՞ւ հանգավ, ինչո՞ւ նորից հառնեց  
Քո անունը, հրաշք այցելու:

Գրքերն ավետեցին, դողացին արքաներ,  
Ու խռով ամբոխը գազազեց,  
Բազինները հանգան, կործանվեցին կուռքեր,  
Ազատության հողմը փոթորկեց  
Ու դղրդաց... Արյան մեջ ու փոշու  
Այրվեցին մատյանները հին,  
Ելավ այրը հզոր, լռեց ամբոխը հլու,  
Շղթա կռեցին և սուր մեր գլխին:

Եվ հանդուզն ու հպարտ պոռնիկը ելավ բեմ,  
Լռեցին նրա դեմ սրտերը խոնարհ,  
Իշխանության համար Հայրենիքն ուրացվեց,  
Եղբայրները ոսկով ծախեցին իրար:  
-Ազատություն չկա,- խելոքներն ասացին,  
Ու հավատացին մարդիկ անձայն.  
Եվ անտարբեր եղան, անհոգի մնացին.  
-Չարն ու բարին,-ասացին,-խոսքեր են  
ունայն:

Եվ ամեն ինչ եղավ ծաղր ու ծանակ,  
Ինչպես քամուն տված անթաղ դիակ:

\* \* \*

Գիշերվա զեփյուռը  
Եթերում սվսվում է,  
Խշշում է, աղմկում  
Ջրվեժը գահավեժ:

Ու ոսկե լուսինն է ելել.  
Լսիր, կիթառն է ծնգում...  
Իսպանուհին ջահել  
Այնտեղ է, պատշգամբում...

Գիշերվա զեփյուռը  
Եթերում սվսվում է,  
Խշշում է, աղմկում  
Ջրվեժը գահավեժ:

Հեռու տար սև քողը քո դեմքից,  
Ժպտա արևոտ օրվա պես,  
Դուրս նայիր երկաթե քո բանտից,  
Դուրս հանիր ոտքդ... Այսպես

Գիշերվա զեփյուռը  
Եթերում սվսվում է,  
Խշշում է, աղմկում  
Ջրվեժը գահավեժ:

\* \* \*

Ով մուսա չարախինդ հեզնանքի,  
Լսիր, ես քեզ եմ կանչում.  
Տուր ինձ մտրակը Հորնաղի,  
Վեհաշունչ քնարը չեմ ուզում:  
Ոչ նմանակողին պաղարյուն,  
Ոչ թարգմանիչներին սոված,  
Ոչ հանգաթուխներին դժգույն  
Ձեմ ուզում տեսնել ծաղրված:  
Հանգիստ մնացեք, անբախտ պոետներ,  
Հանգիստ մնացեք, գրչակներ թերթի,  
Ձգույշ, հիմարներ, մի քիչ մտածեք...  
Ձեզ տեսնեմ, տղերք ստոր ու լկտի.  
Դե՛, առաջ եկեք, ձեր հերն անիծեմ,  
Ձեր խաժամուժը քաշեմ մտրակի:  
Իսկ թե պատահեց՝ մեկին չհիշեմ,  
Հիշեցրեք դուք ինձ առանց ամոթի:  
Օ՛, ինչ անզգամ ու պիղծ երեսներ  
Պատժի կնիքով կուզեի խարանել,  
Այդպես, անվա...



## ՓԱՌՔԻ ՏԵՆՉ

Հնայված քո սիրով ու զգվանքից արբած  
ես անխոս քո առջև ու քո ոտքերն ընկած,  
Նայում էի աչքերիդ, իմն էիր դու միայն.  
Չէր հուզում սիրտս փառքի տենչը ունայն:  
Հեռու էի, գիտես, աշխարհիկ աղմուկից,  
Անունը պոետի տաղտուկ էր բերում ինձ,  
Հոգնել էի, ծանծրացել ու չէի լսում բնավ  
Գովեստ, հիացում, նախատիճք ու պարսավ:  
Ինչի՞նչ էին պետք, ասա, շշուկները դատարկ...  
Քո ձեռքերը քնքուշ ու հայացքը քո տաք  
Գզվում էին, շոյում, ու լսում էի քեզնից.  
«Բախտավո՞ր ես, ասա, սիրո՞ւմ ես դու ինձ.  
Ինձ չե՞ս մոռանա, դու ինձ միշտ կսիրե՞ս,  
Ուրիշին չե՞ս սիրի, միշտ ի՞նչը կլինես...»  
Լուռ էի ես, անոթխած, ու սիրտս չէր տանջվում.  
Գիտեի, որ վերջ չկա, չկա մեզ անջատում  
Ու չի լինի երբեք... Բայց ի՞նչ, այս ի՞նչ եղավ.  
Փլվեցին իմ գլխին բանսարկություն ու դավ,  
Արցունքներ ու տանջանք. մենակ եմ ես, լքված,  
Մենակ, մոլոր ճամփորդ ու կայծակից զարկված:  
Ա՛յ, հիմա ես արդեն ուրիշ բան եմ տենչում՝  
Անուն, համբավ, պատիվ ու ճանաչում,  
Փառք եմ ուզում հիմա, հռչակ եմ ուզում ես,

Որ ամեն տեղ, ամեն ժամ իմ անունը լսես.  
Անունն իմ կանչ դառնա, դառնա ճիչ, աղաղակ  
Ու գոռա ամենուր: Իսկ երբ լինես մենակ,  
Լռության մեջ խոսեմ, խոսեմ քո ականջին,  
Եվ հիշես դու, հիշես խոսքերն իմ վերջին,  
Պաղատանքն իմ հիշես, արցունքներն աղեկեզ  
Մթանը, ձեր այգում, հրաժեշտի պահին:



\* \* \*

Ամեն ինչ գոհենք քեզ համար՝  
Եվ կույսի արցունք, և կարոտ,  
Եվ սեր, և մուսա, և քնար,  
Եվ սրտիս թրթիռը խանդոտ,  
Եվ փառքի շող, և աքսորի խավար,  
Խոհերս, միտքս վարանոտ,  
Վրեժս, սիրտս տանջահար,  
Հոգուս երազները թունոտ:




## ՎՅԱԶԵՄՍԿՈՒՆ

Ծո՞վն է այդ, հոգեառը ծեր,  
Հանճարիդ հուրը բորբոքում,  
Ու ձեռքիդ քնարը ոսկե  
Նեպտունի փա՞ռքն ես երգում:


Թող դրան, ճղճիմ մեր դարում  
Նեպտունը ստրուկն է երկրի,  
Եվ մարդն այս պղտոր տարերքում  
Դաժան է, ծախված ու գերի:






## ԻՇԽԱՆՈՒՀԻ Չ. Ա. ՎՈԼԿՈՆՍԿԱՅԱՅԻՆ

Մոսկովյան սալոններում շփոթ,  
Սեղանների մոտ վիստի ու բոստոնի,  
Պարահանդեսներում աղմկոտ  
Դու սիրում ես քնարն Ապոլոնի:  
Մուսաների տիրուհին ես հպարտ,  
Շողշողում է քնքուշ քո ձեռքին  
Քերթության գայիսոնը կախարդ,  
Քո խոհուն պայծառ ճակատին  
Դրոշմված են և հանճար, և ոգի,  
Սազում են դափնիներ ու վարդ:  
Դարձիր մի պահ քեզնով գերված երգչին,  
Մի մերժիր աղերսանքս խոնարհ,  
Լսիր և իմ ծայնը չնչին,  
Ինչպես մի կին անձանոթ ու օտար,  
Լսիր թափառող գնչուհին:



\* \* \*

Երանության մեջ, ոսկե խնջույքում,  
Արքաների ճոխ սեղանին բազմած,  
Խի՛նդ ու արցունք է պոետը երգում.  
Նա հյուր է այստեղ, ամենքից սիրված:  
Սուտն է գովերգում իր ձայնով արդար,  
Կոչում է սիրո, կոչում սխրանքի,  
Եվ մեծատոնի խոսք ու գովեստին  
Ականջ է կախել երգիչը խոնարհ:  
Բայց մի քիչ հեռու, սանդուղքների մոտ  
Հավաքվել է լուռ անբոխը մթին.  
Ժողովուրդն է այդ իր երգին կարոտ.  
Հեռվից լսում է պոետին:



19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1827

Աստված թող լինի ձեզ միշտ օգնական  
Ծառայության մեջ, հոգսերում կյանքի,  
Խրախճանքներում մեր ընկերական,  
Քաղցր խորհրդում սիրո վայելքի:

Աստված թող լինի ձեզ միշտ օգնական  
Խռովքում անհույս անափ վշտերի,  
Ամայի ծովում, օտար երկնի տակ  
Եվ նկուղներում հեռու աքսորի:



ԹԱԼԻՍԱՆ


Այնտեղ, ուր ծովն է հուսահատ  
Լիզում ափերը վայրի,  
Որ լուսինն է ցողում արծաթ  
Տաք մշուշին գիշերի,  
Ուր տրված է մեղկ վայելքին  
Ծույլ թաթարը մուսուլման,  
Այնտեղ բարի, կախարդ մի կին  
Ընծայեց ինձ թալիսման:

Ընծայեց ու ասաց այսպես.  
Պահիր, տես, չկորցնես,  
Խորհրդավոր ուժ կա այստեղ,  
Ու սրտով եմ տվել քեզ:  
Ոչ կռվի մեջ, ոչ փոթորկի,  
Ոչ փորձանքից, ոչ մահից  
Թալիսմանը քեզ չի փրկի,  
Չնեղանաս ինձանից:

Արևելքի ճոխ գանձերից  
Քեզ բան չի տա, չսպասես,  
Մուհամեդի ծառաներից  
Չի ազատի, չխնդրես:  
Բարեկամիդ կուզես տեսնել

Կամ քո տունը հայրենի  
Օտար երկրից կուգես հասնել,  
Թալիսմանը չի օգնի:

Բայց թե մի օր քեզ հմայեն  
Չար աչքերը խավարում.  
Քո շուրթերից համբույր քաղեն,  
Անսեր համբույր ու խոստում...  
Իմ լավ ընկեր, հիշիր դու ինձ,  
Չես հանդիպի փորձանքի,  
Քնքուշ սրտիդ նոր ցավերից  
Թալիսմանն իմ կփրկի:



\* \* \*

Ջահել զամբիկ, Կովկասի զարդ,  
Թագ ու պարծանք լեռների,  
Ու՞ր ես վազում, ո՞ւր ես թռչում,  
Սանձակոտոր ու վայրի:  
Դու մի խեթիր երկչոտ աչքով,  
Ոտքդ գետին մի՛ զարկիր,  
Լայն ու արձակ այս դաշտերով  
Դու քո քեֆին մի՛ վազիր:  
Դեռ սպասիր, քեզ կհասնեն  
Ու կհեծնեն քո թամբին,  
Պողպատ սանձով քեզ կնեղեն  
Չափ կդնեն քո վազքին:






## ԷՊԻԳՐԱՄ

(Անթրլոգիայից)

Աղեղը զնգում է ու նետը դողում,  
Կծկվում է, մեռնում օձը Պիթոն,  
Հաղթական ու հպարտ քո ծակատն է շողում,  
Բելվեդերյան Ապոլոն:

Ո՞վ էր, հանուն Պիթոնի,  
Ջարդեց կուռքը սրբազան,  
Դու, ախոյան Ապոլոնի,  
Բելվեդերյան Միտրոֆան:




\* \* \*

26 մայիսի, 1828

Իզուր պարզև պատահական,  
Կյանքն ինչո՞ւ է ինձ տրվել,  
Եվ ինչո՞ւ է բախտը դաժան  
Այսպես պատժի ինձ մատնել:

Այդ ո՞վ անգութ իր քմայքով  
Փռչուց կյանքի ինձ կոչեց,  
Հոգիս լցրեց դառը կրքով,  
Միտքս իզուր պղտորեց:

Չունեն ձգտում, չունեն ես իղձ,  
Միտս դատարկ, միտքս անգոր,  
Տանջում են ինձ դառը թախիժ,  
Կյանքի աղմուկ ու ժխոր:



\* \* \*

Մի երգիր գեղուհիս ինձ համար  
Դու վրաց երգերը տխուր.  
Ես հիշում եմ ուրիշ մի աշխարհ  
Եվ ուրիշ ավեր հեռավոր:

Նվազների դաժան են, ավաղ.  
Հիշում եմ երկիրն իմ հեռու,  
Լուսնկա տափաստանը խաղաղ  
Եվ մի դեմք թախծալի ու լուռ:

Այն դեմքը՝ հեռու մի տեսիլք,  
Թվում է մոռանում եմ ես.  
Բայց երգում ես, ականջս երգիր,  
Հիշում եմ... Նա թախծո՞ւմ է ինձ պես:

Մի երգիր, գեղուհիս, ինձ համար  
Դու վրաց երգերը տխուր.  
Ես հիշում եմ ուրիշ մի աշխարհ  
Եվ ուրիշ ավեր հեռավոր:



## ԳԻՍԱՆԿԱՐ

Իր հոգով հրայրքոտ ու խենթ,  
Կրքերով բուռն ու մոլեգին,  
Օ՛, կանայք հյուսիսի, մերթընդմերթ  
Հայտնվում է նա ձեր կողքին:  
Ու ձեր ամոթխած սրտերում  
Բորբոքում է թաքուն մի կրակ...  
Այդ գիսաստղն է անանուն  
Լուսատուների մեջ հասարակ:





## ՄՏԵՐԻՄԸ

Խոսքերդ, տրտունջներիդ քնքուշ,  
Ձգում եմ զարկերդ սրտիդ,  
Մտքերդ, կրքերդ խելահույզ  
Ու քաղցրությունը լեզվիդ...  
Օ՛, վերջ տուր, մի խոսիր այդպես,  
Թաքցրու երազներիդ ինձնից.  
Քո հրով չեմ ուզում ես այրվել,  
Չեմ ուզում իմանալ ես ոչինչ:



\* \* \*

Բախտավոր է նա, ում երազում ես,  
Սրտիդ քնայքով ում ընտրել ես դու,  
Ում առջև սիրուց դու նվաղում ես,  
Ում հայացքը տիրել է հոգուդ:  
Եվ դժբախտ է նա, ով լուռ ու անճար  
Չալվում է քո դեմ, այրվում է ի սեր,  
Տանջում է խանդոտ իր սիրտը համառ  
Ու քեզնից շահում է... խոսքեր:





\* \* \*

Շքեղ քաղաք, տխուր քաղաք,  
Տեսքդ վեհ է, նեղ հոգիդ,  
Երկինքդ գորշ, կանաչ, գունատ,  
Ձանձրույթ ու պաղ գրանիտ:  
Ու տխրում եմ, շատ եմ տխրում,  
Ու երբեմն այս փողոցով  
Մանրիկ քայլով անցնում ես դու,  
Յյուսքդ է ծփում ոսկեշող:



\* \* \*


Վրաստանի բլուրներից նուժն է իջել գիշերվա,  
Ու Արագվին աղմկում է իմ առջև.  
Ես տխուր եմ ու խաղաղ եմ, հոգիս պայծառ է  
հիմա,  
Քեզնով լեցուն, լույսով լեցուն ու թեթև:  
Քեզնով միայն, միայն քեզնով ու ոչինչ.  
Չկա տանջանք, չկա տազնապ սիրտ  
մաշող.  
Ես թախծում եմ, սիրտս այրվում է կարոտից,  
Ու այս սիրուց ինձ ազատել չեմ կարող:



## ՖԱՐՀԱԴ ԲԵԿԻՆ

(Եփրատի ճամբարում)

Դու մի գերվիր ռազմի փառքով,  
Կտրիճ, սիրուն պատանի,  
Ղարաբաղի քո քաջերով  
Մի նետվիր դաշտն արյունի:  
Գիտեն, քեզ չի դիպչի երբեք  
Կույր գնդակը թշնամու.  
Կխնայի ջահել կյանքդ  
Չրեշտակը սև մահու:  
Վախենում են փառքիդ համար,  
Կրակի դեմ ու սրի,  
Դու կորցնես խիղճդ իսպառ,  
Սիրտդ ազնիվ ու բարի:



\* \* \*

Սիրել էմ քեզ, և գուցե թե մինչ հիմա  
Դեռ հիշում են, կարոտում են ու թախծում,  
Բայց դու սիրտդ մի խռովիր ակամա,  
Ու մոռացի՛ր թե արցունքներ, թե խոստում:  
Քեզ սիրել էմ ես լուռ, անխոս ու անհույս,  
Վախով, խանդով ու կարոտով սիրակեզ,  
Այնքան անկեղծ, այնպես անուշ ու քնքուշ,  
Որ տա Աստված, ուրիշն այդպես սիրի քեզ:



\* \* \*

Գնանք, պատրաստ եմ ես, հեռանաք այստեղից,  
Յետ չնայենք, փախչենք այս ցուրտ ու մութ  
երկրից,  
Գնանք, ուր որ կուգենք, ուր որ քամին տանի,  
Մինչև պարիսպները հեռու Չինաստանի:  
Փարիզ գնանք գուցե, կամ այն ափը հեռու,  
Ուր թիավարն էր երգում սերենադը սիրո,  
Ուր քաղաքները նիրհում են մոխրի տալկ,  
Նոճիներն են կանաչ ու մարմարը ճերմակ...  
Ամեն տեղ ես կերթամ, բայց ասացեք դուք ինձ,  
Երկնքի տակ օտար ես չե՞մ տանջվի նորից,  
Կհեռանա՞ն ինձնից տազնապ, ցավ ու կարոտ,  
Կմոռանա՞ն արդյոք այն աղջկան հպարտ  
Ու իմ սերը խանդոտ, թե՞ իմ սիրո տուրքով  
Կդառնամ հետ, իր մոտ:

## ՊՈՆԵՏԻՆ

Պոնետ, դու մի տենչա սերը ժողովրդի,  
Կմարի կարծատն աղմուկը հոգեթով,  
Ծիծաղ կլսես ու խոսքեր տմարդի,  
Անտարբեր մնա, հպարտ ու անխոռով:

Արքա ես, մենակ եղիր ու գնա անարգել  
Այնտեղ, ուր տանում է քո միտքը ազատ,  
Մաքրագործիր այն, ինչ քո խոհն է ծնել,  
Պարզև մի խնդրիր սխրանքիդ համար:

Պարզևր քեզ հետ է, դատավորն ես դու քո,  
Խստասիրտ ես ինքդ ամենից ավելի.  
Գո՞հ ես ինքդ քեզնից, անաչառ դու քերթող,  
Գո՞հ ես, թող ծաղրի քեզ ամբոխն ու սուլի,  
Թող քար նետի վրադ ու թքի քո բազնին,  
Թող ցնցի աթոռդ ու հրճվի իր խելքին:

\* \* \*

Ի՞նչ է ասելու անունն իմ քո սրտին,  
Նա կմարի, ինչպես աղմուկն ունայն,  
Մի ուժասպառ ալիք՝ զարկվող օտար ափին,  
Խուլ անտառում մարող գիշերվա ծայն:

Նա կթողնի թղթին գրչի մի հետք մեռած,  
Մի զարդանախշ, նման շիրմաքարի գրին,  
Օտար լեզվի մի բառ, քո ալբոմում պահված,  
Ի՞նչ է ասելու քեզ, քո հուշերին:

Ի՞նչ կա այնտեղ, երազ մի կորուսյալ  
Յուզումների ծովում, թե՛ նոր, թե՛ հին,  
Ուր չեն հառնելու կարոտների անցյալ,  
Եվ ոչ անեղծ մի հուշ կամ սփոփանք մի սին:

Բայց թախծալի մի օր, մի լուռ ժամի,  
Դու իմ անունը տուր ու բաց էջը թաքուն.  
Ասա, թե կա մի սիրտ՝ անկյուն գաղտնի,  
Ուր պահված է մի կյանք, որպես անուն:

## ՉԱՐՔԵՐԸ

Ամպն է հոսում ու գալարվում,  
Եվ լուսինն է թաքնվել,  
Լույս է տալիս ձյունը մթնում,  
Գիշերն ահով է լցվել:  
Ու գնում ենք, արծակ դաշտում  
Ձանգակները միալար  
Ձնգճնգում են, ու իմ սրտում  
Ցուրտ է, ահ է ու խավար:

-Յեյ կառապան, արագ քշիր...  
-Չեմ կարող, ծին չի քաշում,  
Ձյունը լցվում է աչքերս,  
Ճանապարհս է փակում...  
Որ սպանես, բան չեմ տեսնի,  
Դուրս ենք եկել մենք ճամփից,  
Չարքն է դաշտում մեզ հալածում,  
Տես, վազում է մեր կողքից:

Մի տես, մի տես, ո՞նց է խաղում,  
Փչում, թքում երեսիս,  
Վա՛յ, հիմա էլ ձորն է քաշում,  
Սանձն է կրծում խելառ ծիս,  
Սյան նման մեր դեմ է ցցվել,

Թե՞ իմ աչքին է թվում,  
Ա՛յ, հիմա էլ կայծ է դարձել...  
Հանգավ, կորավ խավարում:

Ամպն է հոսում, ամպն է սուրում,  
Եվ լուսինն է թաքնված,  
Լույս է տալիս ծյունը մթնում,  
Գիշերն ահով է լցված:  
Էլ հալ չկա, խելքս մաղեց,  
Ջանգակը չի դողանջում,  
Ձին կանգ առավ, ի՞նչ պատահեց.  
Կո՞ճղ է, թե գայլ, չեմ ջոկում:

Հողմը սուլում, մղկտում է,  
Հագում, փնչում է մեր ձին,  
Չարքը, մի տես, դեռ վազում է,  
Աչքն է փայլում պաղ մթին:  
Ու ձիերը ծառս են լինում,  
Ջնգզնգում է զանգակը...  
Տեսա, չարքերն են հավաքվում,  
Սևանում է լուսնյակը:

Անվերջ, անձև ու անմարմին,  
Լուսնի պղտոր լույսի տակ  
Պար են բռնել չարքն ու քամին,  
Ո՞րք են երգում, թե կատակ...  
Էս ի՞նչ շատ են, ո՞ւր են վազում,  
Երգ են ասում ցավագին.

Դարձվոր փերու սո՞ւզն են անում,  
Թե՞ պսակում վիուկին:

Եվ ամպերն են ծանր հոսում,  
Եվ լուսինն է թաքնված,  
Լույս է տալիս ծյունը մթնում,  
Գիշերն ահով է լցված:  
Ու սուրում են սև չարքերը,  
Ահն է չոքել իմ սրտում...  
Ծվում, ճչում, հեծեծում են,  
Կաքավում են ու ողբում:



## ՃԱՄՓԻ ՉԱՆՉԱՏ

Ինչքա՞ն պիտի էս աշխարհում  
Թափառական էս լինենմ,  
Չի ու թամբին ու կառեթում,  
Սայլի վրա միշտ ննջենմ:

Ես չեմ հանգչի ոչ մի որջում,  
Ոչ պապերիս շիրմի մոտ  
Յեռու մի տեղ, ճամփամիջում,  
Տափաստանում անձրևոտ,

Կամ քարքարոտ ճամփին ընկած,  
Անիվի տակ, ոտքի տակ,  
Ջրափոսում, կամ էլ փլված  
Մի կամրջի պատի տակ:

Կամ սև ցավը ինձ կբռնի  
Ցուրտ քամու հետ փողոցի,  
Ուղեկալի պահակ քեռին  
Փայտը զլխիս կզցի:

Ես կմեռնեմ կարանտինում,  
Հիվանդ, սառած, անոթի,  
Ինձ կմորթի մութ անտառում  
Մի հարամի շանորդի:

Տանը լավ է, ով ինչ ասի,  
Ու հարկի տակ հայրական  
Հարսնացուս էլ ինձ սպասի,  
Մտքիս՝ իրանց տան ճամփան:

Ինչ էլ լինի՝ մի թաս օղի,  
Տաք թեյ ու տաք օթևան,  
Տուն կհասնենք, ինչ էլ լինի,  
Քշիր, գնա, կառապան...



**ՈՏԱՆԱՎՈՐ՝ ԳՐՎԱԾ ԳԻՇԵՐԸ,  
ԱՆՔՆՈՒԹՅԱՆ ԺԱՍԻՆ**

*Գիշերն արթուն, անճրագ,  
Նիրհ է, անծուկ ու խավար,  
Ժամացույցը միալար,  
Շշուկի պես կանացի,  
Ծիծաղի պես ու լացի,  
Քչփչում է, հաշվարկում է հավասար  
Վարկյանները իմ կյանքի,  
Ու կրծում է ժամանակը  
Պատի ճեղքում նստած մուկը,  
Ու տաղտուկ է... Ինձ տանջում է  
Քո շշուկը երեկվա.  
Խոստանում է, նախատում է ու կանչում.  
Ի՞նչ է ասում, քո կանչում  
Ի՞նչ են փնտրում ես հիմա...*




**ԱՂԵՐՍԱՆՔ**

*Իրա՞վ է արդյոք, որ ամեն գիշեր,  
Երբ լուռ է աշխարհ, քնած է քամին,  
Երկնքից իջնում են լուսնի շողեր  
Ու քսվում են ցուրտ շիրմաքարերին:*

*Օ՛, եթե իրոք այդ ժամին խաղաղ  
Շիրմից ելնում են հոգիներն անտես,  
Չեռացած իմ լույս, տեսիլքը քո պաղ  
Թող այցելի ինձ, սպասում են քեզ:*

*Չայտնվիր ինչպես առկայծող աստղիկ  
Գիշերվա մթնում, կամ թույլ մի զեփյուռ,  
Անխոս, հմայող, վաղանցուկ տեսիլք,  
Թող հառնի մի պահ պատկերը քո լուռ:*

*Դառը կարոտն է ինձ այրում այսպես,  
Սիրտս մորմոքող կսկիծը վայրի  
Ես քոնն են էլի, ես սիրում են քեզ,  
Սպասում են քեզ, դու արի, արի...*



\* \* \*

Նա մեզ հետ էր, մեր մեջ,  
Մարդկանց հետ այլազգի, և չուներ  
Մեր դեմ չարություն իր հոգում, բարի էր,  
Մենք էլ իրեն էինք սիրում: Գալիս էր,  
Նստում մեզ հետ գրույցի,  
Երգում էր մեզ հետ  
(Կյանքին նայում էր իր խոհի բարձունքից)  
Եվ խոսում էր գալիք ժամանակից,  
Երբ ազգերը բոլոր, ցավ ու քեն մոռացած,  
Մի տուն կլինեն, եղբայր ու բախտակից:  
Մենք լսում էինք պոետին հիացած:  
Նա զնաց երկիրն իր, և օրհնանքով լցված  
Ճամփա դրինք նրան: Եվ հիմա  
Մեր հյուրը բարի դարձել է թշնամի  
Եվ թույնով է թաթախում ոտանավորներն իր  
Ի հաճույս գազազած ամբոխի: Հեռվից  
Մեզ է հասնում ձայնը չարացած պոետի,  
Ծանոթ ձայնը... Տեր Աստված, նրա սրտից  
Ոխր հանիր, արդարությամբ լցրու խռով հոգին:

## ԲՈՒԼԳԱՐԻՆԻՆ


Դժբախտություն չէ, որ ծնվել ես լեհ.  
Լեհ էր Կոստյուշոն, Միցկևիչն է լեհ:  
Թեկուզ թուրք լինես, կամ լինես ցիուդ,  
Ցավ չէ, արատ չէ և ոչ էլ ամոթ.  
Ցավն այն է, սակայն, որ ծնվել ես դու,  
Անունդ Ֆադեյ Ֆիզյարին Վիդոկ:



\* \* \*

Կոփվեցի հոգուս թախճալի խռովքում,  
Եվ օրերիս հոսքը, որ պղտոր էր այնքան,  
Խաղաղվեց մի պահ, նիրհեց, ու իր խորքում  
Ցուլաց երկնքի լազուրը անսահման:

Հավե՞տ հեռացան... Թվում է, թե անցան  
Օրերը փորձանքի, ցավի ու դառնության...




#### ՆԱԽՕՐԵԻՆ 1864 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 4

Գնում եմ մենակ իմ ճամփան մոլոր  
Աղոտ լույսի հետ հանգչող իմ օրվա,  
Ծանր է հոգիս, ծնկներս անգոր,  
Քնքուշ իմ ընկեր, ո՞ւր ես դու հիմա:

Մարել է արդեն օրվա լուսատուն,  
Մարեցին վերջին շողերն իրիկվա,  
Մութ է աշխարհը, ուր ապրում էիր դու,  
Հրեշտակ իմ, տեսնո՞ւմ ես ինձ հիմա:

Կբացվի օրը աղոթքի ու թախճի,  
Հիշատակն այն խավար գիշերվա,  
Հրեշտակ իմ, ուր էլ հոգիդ թևածի,  
Նայիր ինձ, տեսնո՞ւմ ես ինձ հիմա:






**ՎԵՐՁԻՆ ՍԵՐ**

Մեր տարիների իրիկնամուտին  
երկչոտ է մեր սերն ու քնքուշ.  
Թող վերջին անգամ շողա մեր ծամփին  
Մի խաղաղ վերջալույս:


Ստվեր է սահում երկնքով,  
Մթնում է, մարմրում է մի շող.  
Թող անվերջ լինի այս երեկոն,  
Ու անվերջ՝ երազները դյուրթող:

Թող արյունս պաղի, կարոտս անհաս  
Չի մարի, օ՛, պատրանք իմ անուշ,  
Դու վերջին, վերջին սեր, դու երազ,  
Դու երանություն և անհույս:



\* \* \*

Օ՛, դուք արցունքներ, արցունքներ անհույս,  
Թափվում եք դուք վաղ ու թափվում եք ուշ,  
Թափվում անամոք, մենակ պահերին,  
Ու թափվում եք լուռ, թափվում եք իզուր,  
Անձրևի նման մաղդ՛ւմ եք, մաղում  
Թխպոտ աշնանը և մութ գիշերին:



\* \* \*

Եկ, սպասում եմ, ուր էլ ինձ տանես,  
Ես կգամ քեզ հետ, ինչպես մի մանուկ,  
Ճամփան կորցրել ու հոգնել եմ ես  
Ունայնության մեջ դժնի ու տաղտուկ:  
Եղմարիտ խոսքեր չեմ խնդրում քեզնից,  
Այլ հոգու կրակ, տենդ ու ընդվզում  
Եվ անհնարին, խելահեղ թռիչք,  
Չիվանդ, հանդուգն ու կույր ներշնչում:

**ՍԻՐԵՐԳ**

Ես որտե՞ղ շղթայեմ ինձ հոգին,  
Որ շունչդ չդիպչի նրան,  
Դուրս քաշեմ ինձ քո ուղեծրից,  
Տանեմ արահետների անձայն  
Ու խուլ թավուտներում խաչված,  
Ուր խորհուրդներ կան այլ,  
Աղջամուղջն է անշարժ,  
Չոգուդ ծփանքներով չողողված:

**ՄՏԱՆՄՆԵՐ**

Կնոռանա՞ս իմ խոսքերը,  
Իմ նախատինքն անարդար.  
Սեր են շնչում այս տողերը,  
Դու միշտ ճիշտ ես ինձ համար:

Իմ լավ ընկեր, իմ սրբուհիս,  
Մի նախատիր ինձ այդպես,  
Գիտես, որ իմ սիրտն է լալիս,  
Ու ցավերս դու գիտես:

Ոչ ձանձրույթ է, ոչ էլ թախիծ,  
Ի՞նչ է այրվում կրծքիս տակ,  
Դու ինձ համար ամեն ինչից  
Վեր ես, վեհ ես ու միակ:

Մանուշակներ ես կփնջեմ  
Ու կաղոթեմ քեզ համար,  
Մի լքիր ինձ, հիվանդ եմ ես  
Վեհության մեջ իմ թշվառ:



\* \* \*

Ով կին, դու սովոր ես խաղալ մանկան նման  
Քո հայացքով քնքուշ, գգվանքով համբույրի.  
Ես քեզ ամբողջ սրտով պիտի ատեն հինա,  
Բայց սիրում եմ, թախծում քո հնայքին գերի:  
Սիրում ու տենչում եմ, ներում եմ ու սիրում  
Ու քեզնով եմ այրվում, մորմոքում կարոտից.  
Ես հոգիս կծախեմ քմայքներիդ սիրուն,  
Չանուն մի հայացքի քեզ լինի ամեն ինչ,  
Չանուն մի սուտ խոսքի, ճշմարտից էլ վեր...  
Դու հոգու կանչ ու լույս, դու ծով երազանքի,  
Չավերժ իմ թշնամի, բարեկամ ու ընկեր,  
Դու բարության հանճար ու չարության ոգի:




\* \* \*

Իմ երագներում սահում են ստվերները,  
Սահում են ստվերները հանգչող իմ օրվա,  
Ու ելնում են վեր, հաշվում իմ քայլերը,  
Ինձ երկինք է տանում սանդուղքը ահա:

Քանի վեր են ելնում, այնքան պարզ է գծվում,  
Այնքան պարզ է ու մոտ հորիզոնը բացվող,  
Ձայները ձգվում են, տարածվում ու մարում,  
Լույսին են ծուլվում ծով, երկինք ու հող:

Քանի վեր են ելնում, այնքան վառ են շողում,  
Այնքան մոտ են թվում գագաթները նիրհող,  
Սահում են ես վեր, դեպ հեռուն ու անհունը,  
Շոյում է լույսը աչքերս մշուշվող:

Իսկ այնտեղ, ներքևում խավար է ու լուռ է,  
Գիշեր է, նիրհում է երկիրը մթնում,  
Իմ բարձունքներում բացվում է օրը,  
Իր ջահն է վառում օրվա լուսատուն:



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

էջ

- 23 Ֆիդիպիդեսն այն զինվորն էր, որ 490թ. (մ.թ.ա.) սեպտեմբերի 13-ին Մարաթոնի ճակատամարտում հույների տարած հաղթանակի լուրը, անցնելով 40 կմ, հասցրեց Աթենք և ընկավ անշնչացած:
- 114 «**Հորեղբորս, որ ինձ կոչում է եղբայր**»:  
Ակնարկն ուղղված է բանաստեղծի հորեղբորը՝ ճանաչված բանաստեղծ և առակագիր Վասիլի Լվովիչ Պուշկինին (1766-1830):
- 115 «**Օգարյովային...**»:  
Ելիզավետա Սերգեևնա Օգարյովա (1786-1870), պետերբուրգյան սալոնների գեղեցկուհիներից մեկը, որին Պուշկինը տեսել է Կարամզինների տանը: Գեղեցկուհուն իր այգու պտուղներն ուղարկողը եղել է Պետերբուրգի թեմական առաջնորդ հայր Ամբրոսիոսը:
- 118 «**Ռուսաց տերության պատմություն**» հեղինակին:  
Խոսքը Նիկոլայ Միխայլովիչ Կարամզինի (1766-1826) մասին է:
- 119 «**Հեթաթներ**»:  
Բանաստեղծն ակնարկում է Ալեքսանդր առաջինին (1777-1825), որ հաճախ է մասնակցել մի-

ջազգային կոնգրեսներին և խոստացել է սահմանադրություն տալ Ռուսաստանին:

123 **N.N. (Վ. Վ. Էնգելզարդին):**

Վասիլի Վասիլևիչ Էնգելզարդ (1785-1837), պաշտոնաթող գնդապետ, Պուլշկինի մտերիմներից մեկը, «Ձեյոնայա լամպա» գրական ընկերության անդամ: Էսկուլապը բժշկության հին հունական աստծու՝ Ասկլեպիոսի հռոմեական անվանումն է: Պինդոսը լեռնային զանգված է Հունաստանի հյուսիսում:

133 **«Ռաշույն»:**

Նենեգիդը հունական դիցաբանության մեջ ծակատազրի ու պատժի աստվածուհու անունն է: Վերջում հիշատակվող Կարլ Չանդը այն գերմանացի ուսանողն էր, որ սպանեց Ռուսաստանից Գերմանիա ուղղարկված լրտես Ավգուստ Կոցեբուին:

145 Հորնադ (Յուվենալիս). հին հռոմեական երգիծաբան (I դ.):

146 **«Իշխանուհի Վոլկոնսկայային»:**

Չինաիդա Ալեքսանդրովնա Վոլկոնսկայան (1789-1862) Մոսկվայի իր տանն ունեցել է գրական սալոն, որի հաճախորդներից է եղել Պուլշկինը:

155 Նվիրված է կոմսուհի Ագրաֆենա Չակրևսկայային (1799-1879), որ իր ազատ ու անկեղծ պահվածքով առիթ է տվել բամբասանքների:

160 **«Ֆարիադ բեկին»:**

1829-ին էրգրումում Պուլշկինը հանդիպել է ռուսական բանակի մուսուլմանական գնդի երիտասարդ սպա Ֆարիադ բեկին՝ Ղարաբաղից եկած:

164 **«Ի՞նչ է ասելու անունն իմ քո սրտին»:**

1823 թ, ամռանը, Օդեսսայում Պուլշկինը ծանոթացել է կոմսուհի Կարոլինա Սոբանսկայայի (1794-1885) հետ: Ռուսերեն չիմացող Կարոլինան խմբրել է բանաստեղծին ստորագրել իր ալբոմում: Բանաստեղծության առիթը կոմսուհու ռուսերեն չիմանալն էր:

172 **«Նա մեզ հետ էր, մեր մեջ...»:**

Այս անավարտ բանաստեղծությունն ուղղված է Ադամ Միցկևիչին (1798-1855): 1830-31թթ, լեհական ապստամբության շրջանում Միցկևիչին վրդովել է Պուլշկինի հակալեհական դիրքորոշումը, և Պուլշկինին էլ վշտացրել է Միցկևիչի պատասխանը:

179 **Ռ. –Մ.Ռիլկե, «Սիրերգ»:**

Թարգմանված է ռուսերենից և առաջին յոթ տողը, թարգմանչիս կարծիքով, ամբողջական և ավարտուն է: Շարունակության մեջ փոխվում է թեման, որ, կարծում ենք, առաջին հատվածի խորությունը չունի: Այս թարգմանությունն ընթերցողը կարող է ընդունել որպես ազատ փոխադրություն:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Լիրիկական շեղումներ

Հին է դիմակս և լեզուս է հին .....	4
Իմ հյուլեն այնտեղ էր .....	5
Ես աշխարհ եկա դրախտում .....	6
Եղե՞լ էր արոյոք, թե լինելու էր .....	7
Existencia .....	8
Մենք երբեք մենակ չենք լինում .....	9
Կարտեզյան փակուղում .....	10
Անքնության .....	11
Ինքդ քեզ .....	12
Սեպտեմբերի 16, 2011 թ. ....	13
Հեռու պահիր քեզ .....	14
Մի տանջիր միտքդ, մի վճռիր ոչինչ .....	15
Անդարձություն .....	16
Անձանոթուրու դիմանկարին .....	17
Թատրոն .....	18
Դերասանին .....	19
Պլատոնական սեր .....	20
Одна .....	21
Երբ արդեն հասել ես մի ափ .....	22
Μαραφον .....	23
Դո՞ն ժուանի վերջին երգը .....	24
Ասպետական սեր .....	25
Բեռնարտ Տրուբադուրին .....	26
Ռ. Հ .....	27
Կաթարսիս .....	28

Ջրաշուշան .....	29
Հելլենական .....	30
Տաճարը .....	31
Ընկերություն .....	32
Աղոթքի փոխարեն .....	33
Ամենագորն ու անխուսափելին .....	34
Արթնացում .....	35
Չայկովսկու «Մեկանխուլիկ սերենադը» .....	36
Մենք աշխարհ եկանք լույս երազներով .....	37
Դուլսինեա .....	38
Էլեգիա .....	39
Աշնան ծաղկի նման .....	40
Անցյալը պարտեզն է մեր հոգու .....	41
Մոմի լույսը չնչին .....	42
Կրում ես քո ներկան .....	43
Ռ՞վ էր, ձայն տվեց ինձ .....	44

### Պատմության փակուղիներում

Քավարանի լեռն է մեր երկիրը .....	46
Նաիրի .....	47
Շիղար .....	48
Վասն հավատո .....	49
Եկել որդին փրկելու մարդկանց .....	50
Դեռ սպասում ենք նրան .....	51
Տղմուտ գետի ափին .....	52
Դեպի ապագան .....	53
Ե. Չ. ....	54
Ոգու սով .....	55
Պատմություն տեսած, կեղեքված հողում .....	56
Ըստ Տյուտչևի .....	57
Ու՞ր էինք գնում, որ տեղ չհասանք .....	58

## Քառյակներ

Խորան ու մի դուռ, իմ խուցը միշտ նեղ .....	60
Որտե՞ղ է ժամանակը, ամենո՞ւր, ինչ-որ տե՞ղ ..	61
Ճերմակ թուղթ, անապատ է ճերմակ .....	62
Ամեն պահ կորցնում ենք պահը .....	63
Դու գեղեցիկ ես, կանգ առ ականթարթ .....	64
Ծաղկամանն ընկավ, ո՞վ էր ձեռք տվել .....	65
Ի՞նչ է ոչինչը, դա կանչն է ինչի .....	66
Անցյալը կտավ է մի հիմ .....	67
Իրական է միայն ոչինչը .....	68
Մի տեղից եկել, գնում ենք մի տեղ .....	69
Անցյալը ծառան է ներկայի .....	70
Չկա ոչ ժամանակ, ոչ էլ տեղ .....	71
Ես ոչինչ չունեմ, իմը չէ ոչինչ.....	72
Ժամանակն անգոյ է, ժամանակն անձն .....	73
Հոսում է անվերջ, անդադար .....	74
Ժամանակը գնացքի ընթացք է .....	75
Գիտակցվում է մի էություն վերին .....	76
Ճշմարիտ է նա, գիտենք, որ նա կա .....	77
Ճշմարիտ է այն, ինչը որ չկա .....	78
Ճշմարտությունը ինքն է իր վկան .....	79
Վերջին մի առավոտ ու երեկո վերջին .....	80
Անսահման է, անհուն, անհատակ .....	81
Վերջն ի՞նչ է լինելու, ասում ես .....	82
Դու փնտրում ես այն, ինչը կրում ես .....	83
Մի փնտրիր քեզնում դու ոչինչ .....	84
Գանապարհի կեսը ես վաղուց եմ անցել.....	85
Մեզնից դուրս, անհայտ ի՞նչ կա այն կողմում ..	86

## Չախ Չեռքով

Ծանիր ինքդ քեզ, ասում եմ ես ինձ .....	88
---------------------------------------	----

Иду я пядом с ложью .....	89
-Ես գնում եմ, - ասաց մորուքավոր մի ծեր .....	90
Լուսնահաչ .....	91
Միզանտրոպիա .....	92
Ամեն լավ տղա մտել է խորան .....	93
Հաշտ ու համերաշխ, իրր հավասար.....	94
Երևանյան սերենադ .....	95
* * *-ին .....	96
Հայի լավատեսություն .....	97
Մ .....	98
Ինքնանախատինք .....	99
Սուտն ամեն անգամ առաջ է մի քայլ .....	100

<b>Բանաստեղծության</b>	<b>թարգմանելիության</b>	
<b>սահմաններում.....</b>		<b>101</b>

## Ալեքսանդր Պուշկին

Հորեղբորս, որ ինձ անվանում է եղբայր .....	114
Օգարյովային, որին միտրոպոլիտն ուղարկել էր իր այգու պտուղները .....	115
Ժուկովսկուն .....	116
Ժուկովսկու դիմանկարին .....	117
«Ռուսաց տերության պատմության» հեղի- նակին .....	118
Հեքիաթներ .....	119
Ապաքինում .....	121
*** (Վ. Վ. Էնգելզարդին) .....	123
Տան ոգուն .....	125
Ջրահարսը .....	126
Վյազենսկու դիմանկարին .....	129
Էպիգրամ (Կոմս Ֆ. Ի. Տոլստոյին) .....	130
*** -ին .....	131
Չեզ չեմ ավստսում, իմ գարնան օրեր .....	132



Դաշույն .....	133
Տասներորդ պատվիրանը .....	135
Գիշեր .....	136
Կյանքի սայլը .....	137
Վորոնցովին .....	138
Ինչո՞ւ աշխարհ եկար .....	139
Գիշերվա զեփյուռը .....	140
Ով մուսա չարախինդ հեզմանքի .....	141
Փառքի տենչ .....	142
Ամեն ինչ զոհեմ քեզ համար .....	144
Վյազեմսկուն .....	145
Իշխանուհի Վոլկոնսկայային .....	146
Երանության մեջ, ոսկե խնջույքում .....	147
19 հոկտեմբերի, 1827 .....	148
Թալիսման .....	149
Ջահել զամբիկ, Կովկասի զարդ .....	151
Էպիգրամ .....	152
Իզուր պարզև պատահական .....	153
Մի երգիր գեղուհիս ինձ համար .....	154
Դիմանկար .....	155
Մտերիմը .....	156
Բախտավոր է նա, ում երազում ես .....	157
Շքեղ քաղաք, տխուր քաղաք .....	158
Վրաստանի բլուրներից .....	159
Ֆարհադ բեկին .....	160
Սիրել եմ քեզ .....	161
Գնանք, պատրաստ եմ ես .....	162
Պոետին .....	163
Ի՞նչ է ասելու անունն իմ քո սրտին .....	164
Չարքերը .....	165
Ճամփի գանգատ .....	168
Ոտանավոր գրված գիշերը, անքնության ժամին .....	170

Աղերսանք .....	171
Նա մեր մեջ էր ապրում .....	172
Բուլզարինին .....	173
Կոփվեցի հոգուս թախծալի խռովքում .....	174

### Ֆյոդոր Տյուտչև

Նախօրեին 1864 թ., օգոստոսի 4 .....	175
Վերջին սեր .....	176
Օ՛, դուք արցունքներ .....	177

### Սեմյոն Նադսոն

Եկ, սպասում եմ, ուր էլ ինձ տանես .....	178
--	-----

### Ռայներ Ռիլկե

Սիրերգ .....	179
--------------	-----

### Իզոր Սեվերյանին

Ստանաներ .....	180
----------------	-----

### Կոնստանտին Բալմոնտ

Ով կին, դու սովոր ես խաղալ մանկան նման ...	181
Իմ երազներում սահում են ստվերները .....	182
Ճանոթագրություններ .....	183

ՀԵՆՐԻԿ ՎԱՅԱՆԻ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ  
Բանաստեղծություններ  
և թարգմանություններ

ГЕНРИК ВАГАНОВИЧ ИОАННИСЯН

НЕВОЗВРАТИМОСТЬ  
Стихотворения  
и переводы

Համակարգչային շարվածքը Սվետլանա  
Դանիելյանի  
Համակարգչային ձևավորումը և էջադրումը  
Վերա Պապյանի  
Կազմի լուսանկարը Գևորգ Օրդյանի  
Կազմի ձևավորումը Գուրգեն Գասպարյանի